

**«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄ**

*Թարգմանություն անգլերենից*



**ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ**

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՐՄԱՆ ԻՆՍԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ**

**ԵՐԵՎԱՆ - 2013**

## ՆԱԽԱԲԱՆ

Երևանի պետական համալսարանի /ԵՊՀ/ փորձնական խնստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է Համաշխարհային բանկի դրամաշնորհային ծրագրի և ՀՀ Կրթության և գիտության նախարարության Կրթական ծրագրերի կենտրոնի աջակցությամբ: Հավատարմագրման գործընթացի իրականացմանը նպաստել են «Հայաստանում որակի ապահովման տեխնիկական աջակցություն» ծրագիրը (ARQATA), որը համակարգվում էր Նիդերլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման կազմակերպության (NVAO) կողմից և «Փորձնական հավատարմագրումներ» ծրագիրը (Pilot Accreditations), որը համակարգվում էր «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ANQA) կողմից:

Փորձարկումը համատեղ գործընթաց է եղել, փորձագիտական խումբը բաղկացած էր տեղացի և Նիդերլանդներից ու Ֆլանդրիայից (Բելգիա) ժամանած փորձագետներից: Փորձնական հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանն, այլև կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, եվրոպական և հայաստանյան փորձագետների առջև դրված էր «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ANQA) կողմից:

- փորձնական փորձաքննություն և
- միջազգային չափանիշների վրա հիմնված գործընկերային գնահատում:

Փորձարկմանը մասնակցել են հետևյալ համալսարաններն ու ծրագրեր՝

1. Երևանի պետական բժշկական համալսարան (ԵՊԲՀ), խնստիտուցիոնալ փորձաքննություն,
2. «Բուժական գործ» բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրեր, ԵՊԲՀ, ծրագրային գնահատում,
3. Երևանի պետական համալսարան (ԵՊՀ), խնստիտուցիոնալ փորձաքննություն,
4. «Կենսաբանություն» բակալավրի և «Գենետիկա» մագիստրոսի կրթական ծրագրեր, ԵՊՀ, ծրագրային գնահատում:

Չորս փորձագիտական խմբերի առջև դրված էր երկու խնդիր՝ (1) խնստիտուցիոնալ մակարդակում իրականացնել փորձնական փորձաքննություն, ծրագրային մակարդակում՝ փորձնական գնահատում՝ ՈԱԱԿ-ի չափանիշներին համապատասխան, (2) իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային չափանիշներին համապատասխանելու և Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ) ինտեգրվելու բուհերի հավակնությունների տեսանկյունից:

ARQATA ծրագրի շրջանակներում իրակացված փորձարկումները միտված են աջակցելու հայաստանյան շահակիցներին ձևավորել որակի ապահովման արդյունավետ համակարգ: Փորձարկումների ընթացակարգը, հիմնականում, նման է իսկական հավատարմագրման գործընթացի ընթացակարգերին, սակայն եղել են որոշակի տարրերություններ: Հենց սկզբից գործընթացը պլանավորվել և իրականացվել է որպես փորձարկում՝ իրական գործընթացի որոշակի տարրերով: Փորձագիտական այցի տևողությունն ավելի կարճ էր (Երկուսից երեք օր): Այցի ընթացքում փորձագետները հանդես եկան որպես «քննադատ գործընկերներ»: Փորձնական հավատարմագրման գործընթացի վերջում փորձագիտական խմբերը կներկայացնեն զեկույցներ՝ չնայած զեկույցները չեն կարող լիարժեք հիմք հանդիսանալ իսկական հավատարմագրման վերաբերյալ որոշման կայացման գործընթացում:

Այս գեկույցն անդրադառնում է ԵՊՀ-ի փորձնական խնստիտուցիոնալ հավատարմագրմանը՝ ըստ ՈԱԱԿ-ի չափանիշերի ու չափորոշիչների և գործընկերային գնահատմանը՝ ըստ միջազգային չափանիշերի:

ՈԱԱԿ-ի հավատարմագրման չափանիշներն ու ընթացակարգերը հաստատվել են ՀՀ կառավարության կողմից 2011թ. հունիսի 30-ին:

Փորձնական փորձաքննությունն իրականացվել է՝ Որակի ապահովման եվրոպական ուղենիշերին և չափորոշիչներին համապատասխան:

## **Բովանդակություն**

1.	ՀԱՄԱՊՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ	5
2.	ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ	9
3.	ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	10
4.	ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍԱԼՄԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	14
5.	ՓՈՐՁԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ	17
	ՉԱՓԱԼԻՇ I. ԱՌԱՋԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ	17
	ՉԱՓԱԼԻՇ II: ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	20
	ՉԱՓԱԼԻՇ III: ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ	24
	ՉԱՓԱԼԻՇ 4: ՈՒՍՏԱՆՈՂՆԵՐ	27
	ՉԱՓԱԼԻՇ V: ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ	31
	ՉԱՓԱԼԻՇ VI: ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ	34
	ՉԱՓԱԼԻՇ VII: ԵՆԹԱԿԱՌՈՒԹՎԱԾՔ ԵՎ ՈԵՍՈՒՐՄՆԵՐ	38
	ՉԱՓԱԼԻՇ VIII: ՀԱՍԱՐԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ	41
	ՉԱՓԱԼԻՇ IX: ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ	44
	ՉԱՓԱԼԻՇ X: ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՍԱԿԱՐԳ	46
6.	ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ	49
7.	ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱԼԻՇԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ	50
	ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ	53
	ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	56
	ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ	58
	ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՈԵՍՈՒՐՄՆԵՐ	60
	ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԵՊՀ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՎԱԾՔ	61
	ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ	62

## 1. ՀԱՄԱՌԱՋ ՆԿԱՐԱԳԻՐ

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ԵՊՀ մասնակցությունը որակի անկախ արտաքին գնահատման գործընթացին: Համալսարանը, իիմնելով որակի ապահովման կենտրոն, աջակցելով վերջինիս գործունեությանը և ARQATA<sup>1</sup> ծրագրի շրջանակներում սերտ համագործակցելով ՈՍԱԿ<sup>2</sup>-ի և NVAO<sup>3</sup>-ի հետ, մեծ ներդրում է ունեցել որակի ներքին ապահովման գործընթացում: Որակի ապահովման կենտրոնի արդյունվետ գործունեության արդյունքում հնարավոր եղավ իրականացնել փորձաքննություն:

### Փորձական ինստիտուցիոնալ հավատարմագրում

Ներկայացված փաստերը մանրամասն ուսումնասիրելուց և համալսարանի ներկայացուցիչների հետ հանդիպումներից հետո փորձագիտական խումբը հանգեց այն եզրակացությանը, որ ԵՊՀ-ն բավարարում է ՈՍԱԿ-ի բոլոր չափանիշերին՝ բացառությամբ 1-ից: Փորձագիտական խումբը բավական երկար քննարկումներ ունեցավ 6-րդ չափանիշը (հետազոտություն և զարգացում) անբավարար գնահատելու վերաբերյալ, քանի որ համալսարանը Հայաստանում և տարածաշրջանում առաջատարն է և ունի լուրջ ձեռքբերումներ: Միննույն ժամանակ համալսարանը ցանկանում է միջազգային մակարդակում մրցունակ լինել: Այդ առումով փորձագիտական խումբը գտնում է, որն այն ամբողջովին չի բավարարում հետազոտություն և զարգացում չափանիշի պահանջներին:

### Ուժեղ կողմեր

- Ուազմավարական նպատակները լայն տարածում ունեն բուհում, դասախոսներն ու ուսանողները տեղյակ են նպատակներին և ընդհանուր առմամբ աջակցում են վերջիններին իրականացմանը:
- Ուսանողների ներգրավվածությունը կառավարման բոլոր մակարդակներում գովելի է: Ուսանողները տեղեկացված են և ազդեցություն ունեն որոշումների կայացման գործընթացում:
- Առկա են տեղեկատվության հավաքագրման SS գործիքներ: Մի քանի ոլորտներում տվյալները պարբերաբար հավաքագրվում են:
- Ուսանողների գիտելիքների գնահատումն օբյեկտիվ է, իսկ գնահատման չափանիշները՝ թափանցիկ:
- Դասախոսները մոտիվացված և նվիրված են: Ուսանողների բավարարվածությունը դասախոսներից, ընդհանուր առմամբ, բավականին բարձր է: Փորձագիտական խումբը նկատեց, որ անձնակազմը սերտ համագործակցում է, իսկ խնդիրները լուծվում են միասնականորեն:
- Սահմանափակ ռեսուրսներով համալսարանը կարողացել է ապահովել համապատասխան ուսումնական միջավայր, այդ բվում՝ գրադարան և SS կենտրոն:
- Ուսանողների բավարարվածությունն ուսումնառության ռեսուրսներից և տեխնիկական աջակցությունից բավական բարձր է:
- Համալսարանը քայլեր է իրականացնում կոռուպցիայի դեմ պայքարի՝ օգտագործելով բոլոր հնարավորությունները բացասական ռիսկերը նվազեցնելու համար:

<sup>1</sup> Հայաստանի որակի ապահովման համակարգի տեխնիկական աջակցության ծրագիր

<sup>2</sup> Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամ

<sup>3</sup> Նիդերլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման կազմակերպություն

- Դասախոսների հասարակական գործունեությունը հաշվի է առնվում անձնակազմի գնահատման գործընթացում, որն իր հերթին նպաստում է համալսարանական հանրության՝ ծառայությունների մատուցմանը միտված նպատակների իրականացմանը:
- Համալսարանն ունի ակտիվ միջազգայանացման բաժին, որը տարբեր քայլեր է նախաձեռնում արտաքին կապերն ու միջազգայանացումը զարգացնելու նպատակով:
- Փորձագիտական խումբը գնահատում է տեղեկատվական, լավ կառուցված և թարմացված կայքերը, որը գործում է նաև անզերեն լեզվով, բավարարում է արտաքին պահանջներին և ապահովում է համալսարանի տեսանելիությունը:

## **Թույլ կողմեր**

- Համալսարանի առաքելությունը բավական ընդհանրական է: ԵՊՀ պրոֆիլը պետք է լինի ավելի հստակ:
- Արտաքին շահակիցների ներգրավվածությունը բարելավման կարիք ունի:
- Բունիք պետք է մշակի դասավանդման ու ուսումնառության մեթոդներն ուսումնառության վերջնարդյունքներին համապատասխանեցնելու հստակ քաղաքականություն:
- Փորձագիտական խումբը մտահոգված է անհրաժեշտ միջառարկայական ծրագրերի բացակայությամբ: Վերջինիս առկայությունը խիստ կարևոր է, քանզի հետազոտության ոլորտում բազմաթիվ հարցեր կլուծվեն միջառարկայական համագործակցությունների շնորհիվ:
- Համալսարանն որդեգրել է ուսումնառության ուսանողակենստրոն մոտեցումը, որը կրթությունը ժամանակակից դարձնելու ամենակարևոր գրավականներից մեկն է: Անցումը դեռևս ամբողջովին իրականացված չէ, և լուրջ ջանքեր են անհրաժեշտ՝ այս ուղղությամբ առաջխաղացման հասնելու համար:
- Առանձնահատուկ կարքիներ ունեցող և օտարերկրյա ուսանողներին տրվող աջակցությունը պաշտոնական ձևակերպման և բարելավման կարիք ունի: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել վերջիններիս կրթական առախաղացումն ապահովելու համար, ինչպես նաև անհրաժեշտ է խթանել և ապահովել վերջիններիս ակտիվ ներգրավվածությունը համալսարանական մարմիններում:
- Հաշվի առնելով բուհի կրթական հավակնությունները՝ փորձագիտական խումբը կարծում է, որ գիտական կոչում ունեցող դասախոսների տոկոսը քիչ է:
- Հետազոտական գործունեությունը սահմանափակ է՝ հաշվի առնելով և՝ արդյունքները, և՝ հետազոտության մեջ ներգրավված ուսանողների և դասախոսների թիվը:
- Բունիք դեռևս ամբողջովին չի ընդունում, որ հետազոտությունը կրթության մեջ ուսումնառության հիմնական մեթոդն է: Փորձագիտական խումբը գտնում է, որ ուսանողներին հետազոտական գործունեության նախապատրաստելը պետք է բոլոր կրթական ծրագրերի բաղկացուցիչ մասը լինի:
- Առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար անհրաժեշտ ենթակառուցվածքային հարմարություններ չկան:
- Փորձագիտական խումբը նկատեց բազմաթիվ ժամանակավոր նախաձեռնություններ, սակայն միջազգայնացման միասնական ռազմավարություն դեռևս չկա:
- Միջազգայնացման զարգացման գործընթացում անզերենի չիմացությունը լուրջ բացթողում է: Դասախոսական կազմի անզերեն լեզվի իմացությունը բավական ցածր է:
- Որակի մշակույթը դեռևս արդողովին չի ձևակերպվել: ԴԻՍԲ շրջափուլը դեռևս փակված չէ, և իրականացված գնահատումների արդյունքները դեռևս հստակ չեն:

## **Խորհրդատվություն**

- Աշխատաշուկայի և շրջանավարտների ներգրավվածությունը բուհի կառավարման գործընթացներում բարելավման անհրաժեշտություն ունի: Փորձագիտական խումբը հասկանում է թույլ զարգացած աշխատաշուկայի պատճառով առաջացած դժվարությունները:
- Բուհը պետք է մշակի ուսումնառության վերջնարդյունքների և դասավանդման ու ուսումնառության մեթոդների համապատասխանեցման հստակ քաղաքականություն:
- Փորձագիտական խումբը խորհուրդ է տալիս ներդնել նոր բազմադիմության ծրագրեր, քանի որ հետազոտության ոլորտում բազմաթիվ հիմնահարցեր իրենց լուծումը կգտնեն միջառարկայական համագործակցությունների շնորհիվ: Այն նաև կնպաստի գիտահետազոտական աշխատանքների միջազգայնացմանը՝ հետազոտական գործունեության մեջ ներգրավելով տեղացի և օտարերկրյա դասախոսներին ու ուսանողներին, ինչը կամրապնդի նաև կրթության և հետազոտության կապը:
- ԲՈՒՀ-ի որակի ապահովման համակարգը կրարելավվի պարբերաբար՝ անկախ արտաքին գնահատում իրականացնելու միջոցով:
- Փորձագիտական խումբը խորհուրդ է տալիս Իջևանի մասնաճյուղն ավելի ուղղակիորեն ներգրավվել համալսարանի ներքին որակի ապահովման համակարգում՝ հաշվի առնելով մասնաճյուղի որակի ներքին ապահովման համակարգի արդյունքները:
- Փորձագիտական խումբը խորհուրդ է տալիս հետազում ներդնել տվյալների հավաքագրման գործընթացի վերահսկման թվայնացված համակարգ:

## **Գործընկերային գնահատում՝ ըստ միջազգային չափորոշիչների**

Փորձագիտական խումբը կատարել է փորձագիտական գնահատում, որի արդյունքում ներկայացվել են մի շարք դասողություններ և խորհրդատվություններ՝ համալսարանի՝ եվրոպական բարձրագույն կրթական տարածք (ԵԲԿՏ) ինտեգրվելու հավակնության վերաբերյալ:

## **Դիտարկումներ**

- 1 Բուհը գտնվում է անցումային շրջանում: Փորձագիտական խումբը բուհի ուսումնավարության և գործող իրավիճակի միջև անհամապատասխանություն է տեսնում:
- 2 Ծրագրերն ավելի շատ ավանդական են դասախոսակենտրոնության և առարկայակենտրոնության տեսանկյունից: Ավելի մեծ շեշտադրում կատարվում է տեսական գիտելիքի վրա, քան հմտությունների և մասնագիտական վարքագծի ձևավորման: Եթե բուհը նպատակադրված է ծրագրերը ժամանակակից դարձնել, պետք է որդեգրի ուսանողակենտրոն և բազմադիմությանը մոտեցում:
- 3 Հետազոտական գործունեությունը սահմանափակ է՝ հաշվի առնելով և՝ արդյունքները, և՝ հետազոտության մեջ ներգրավված ուսանողների և դասախոսների թիվը:
- 4 Ակնկալվող ուսումնառության արդյունքների և գնահատման համակարգի միջև կապը հստակ չէ, հատկապես հմտությունների և մասնագիտական վարքագծի գնահատումն ունի հետագա բարելավման կարիք:
- 5 Շատ քիչ ուսանողներ են մասնակցում միջազգային գործունեությանը, ինչպես նաև անձնակազմից ոչ բոլորն են ներգրավված միջազգայնացման գործընթացում:
- 6 Փորձագիտական խումբը չտեսավ միջազգային բենշմարքինգի մասին վկայող փաստեր: Որոշ ամբիոններում իրականացվում էր միջազգային բենշմարքինգ, սակայն վերջինիս չէր իրականացվում ինստիտուցիոնալ մակարդակով:

- 7 Առկա է տվյալների հավաքագրման մեխանիզմ, սակայն դեռևս ամբողջովին մշակված և ներդրված չէ:
- 8 Կրթական ծրագրերի որակի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ներքին համակարգը խճճված է:
- 9 Առկա են բավարար հիմքեր տարբեր խորհուրդներում ներքին շահակիցների ներգրավվածության վերաբերյալ, սակայն արտաքին շահակիցների ներգրավվածությունը սահմանափակ է: Բացի այդ, արտաքին շահակիցների հետ հաղորդակցությունը հիմնականում ոչ պաշտոնական բնույթ է կրում:

### ***Խորհրդատվություն***

Բոլոնիայի գործընթացին վերաբերող ԵՊՀ հիմնախնդիրներն են՝ կոլեգիալ ակադեմիական մշակույթի վրա հիմնված ոչ ուռացված կազմակերպական կառույցը, հստակ սահմանված կրթական ծրագրերը ՈԱՇ-ի պահանջներին համապատասխան, արտաքին շահակիցների հետ ինտենսիվ համագործակցությունը, կրթական հայեցակարգի նորացումը, գերազանցության կենտրոնների և միջառարկայական մոտեցումների որդեգրման միջոցով հետազոտության բարելավումը, բյուջեի բաշխումը, միջազգայնացման բարելավումը (բենշմարքինք, դասավանդող անձնակազմի շարժունություն, անգլերեն լեզվի բարելավում):

Փորձագիտական խմբի դեկանարքը և համակարգողը հայտարարում են, որ այս գեկույցը կազմվել է փորձագիտական խմբի անդամների հաշվետվությունների հիման վրա: Փորձագիտական խումբը վերլուծել է հաշվետվությունը և այնտեղ ներկայացված եղանակացության շուրջ եկել է համաձայնության:

Փորձագիտական խմբի անդամները հաստատում են, որ գնահատումն իրականացվել է համաձայն անկախության սկզբունքի պահանջների:

10.10.2013թ. \_\_\_\_\_

**Պրոֆ. Բեն Վան Քեմփ, դեկանարք**

**Անի Մկրտչյան, համակարգող**

## 2. ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ<sup>4</sup>

ԵՊՀ ինքնավերլուծության և որակի ապահովման գործընթացների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի անդամների կողմից (տե՛ս՝ կից հավելված 1, փորձագետների ինքնակենսագրականները):

- **Պրոֆեսոր Բեն Վան Քեմփ՝** Բրյուսելի Ազատ համալսարանի (Vrije Universiteit Brussel) նախկին ռեկտոր և բժշկական դպրոցի դեկան, հեմատոլոգիայի պրոֆեսոր, համալսարանական կլինիկայի կառավարման խորհրդի նախագահ, Բրյուսել:
- **Պրոֆեսոր Յան Կայնե Լեյդեն** համալսարանի բիոգիտությունների պաշտոնաթող պրոֆեսոր, ֆիզտեխնոլոգիաների պրոֆեսոր, բույսերի ֆիզիոլոգիայի և բիոգիտությունների պրոֆեսոր Լեյդենում, Նորվեգիայի Թրոմս համալսարանի միկրոկենսաբանության հրավիրված պրոֆեսոր:
- **Պրոֆեսոր Յուրի Սուլվարյան՝** ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժնի ակադեմիկոս-քարտուղար, նախագահության անդամ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ամբիոնի վարիչ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի նախկին ռեկտոր:
- **Պրոֆեսոր Արա Ամիրյան՝** Կրթական բարեփոխումների, ռազմավարական պլանավորման, որակի վերահսկման և ինքնավերլուծության վարչության պետ, ՀՊԱՀ “Գրաֆիկայի և ՄՆՀ” ամբիոնի վարիչ:
- **Զարուհի Սարգսյան՝** Երևանի «Գլածոր» համալսարանի Միջազգային հարաբերություններ ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողություն: Մասնակցել է Ուսանողական գիտական ընկերության աշխատանքներին: Երիտասարդական հասարարակական կազմակերպության անդամ է:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է համալսարանի հետ և նշանակվել ՈԱԱԿ-ի տնօրենի որոշմամբ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է կրտսեր համակարգող Անի Մկրտչյանը՝ ՈԱԱԿ-ի ավագ համակարգող Սուսաննա Կարախանյանի վերահսկողությամբ (Հայաստանից) և Միշել Վերան ու Ֆրանկ Վեյմինկը Հոլանդիայի և Ֆլանդրայի հավատարմագրման գործակալության կողմից (NVAO):

Արձանագրությունները կազմել է Մելինե Հարությունյանը:

Թարգանությունը կատարել է Մերի Դալլաքյանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները և քարտուղարությունը ստորագրել են անկախության և զաղտնիության համաձայնագրեր:

<sup>4</sup>ՀԱՎԵԼՎԱԾ 1. Փորձագիտական խմբի ինքնակենսագրություն

### **3. ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

#### **Դիմում պետական հավատարմագրման համար**

ԵՊՀ-ն դիմել է փորձնական խնստիտուցիոնալ հավատարմագրման համար 2012թ. փետրվարի 29-ին՝ ՈԱԱԿ-ին ներկայացնելով դիմումը, արտոնագրի պատճենները և համապատասխան հավելվածները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունը ստուգել է դիմումի փաթեթի համապատասխանությունը ՈԱԱԿ-ի պահանջներին՝ լրացված դիմումում նշված տվյալները, հավելվածները և համալսարանի կողմից լրացված ՈԱԱԿ էլեկտրոնային հարցաշարը:

Համաձայն 2012թ. մարտի 26-ին դիմումն ընդունելու մասին որոշման՝ ստորագրվել է եռակողմ համաձայնագիր ՈԱԱԿ-ի, Կրթական ծրագրերի կենտրոնի (ՀՀ ԿԳՆ ԾԻԳ) և ԵՊՀ-ի միջև:

Կազմվել և հաստատվել է գործողությունների ժամանակացույցը:

ԵՊՀ դեկավարության որոշման հիման վրա ձևավորված ինքնավերլուծություն իրականացնող թիմը կատարել է ինքնագնահատում 2012թ. մարտի 26-ից մինչև 2013թ. ապրիլի 2-ն ընկած ժամանակահատվածում:

Ինքնավերլուծության գեկույցի անգլերեն և հայերեն տարբերակներն ընդունվել են ՈԱԱԿ-ի կողմից 2013թ. ապրիլի 2-ին:

ՈԱԱԿ-ի կրտսեր համակարգողն ուսումնասիրել է գեկույցը՝ տեխնիկական առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: 2013թ. ապրիլի 15-ին ինքնավերլուծական գեկույցն ուղարկվել է փորձագիտական խմբին՝ նախնական գնահատման: Գնահատումն իրականացվել է 2013թ. ապրիլի 15-ից մինչև 2013թ. հունիսի 15-ն ընկած ժամանակահատվածում: Գնահատման արդյունքում դուրս են բերվել այցի ժամանակ պարզաբանման ենթակա հարցերը և որոշվել են հանդիպումների թիրախային խմբերը:

#### **Իրականացված ընթացակարգ**

2012թ. հոկտեմբերի 10-ին ԵՊՀ փորձնական խնստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացում ներգրավված անձինք մասնակցել են որակի ներքին ապահովման վերաբերյալ երկօրյա վերապատրաստմանը: Վերապատրաստման ընթացքում պարզաբանվել են մի շարք հարցեր՝ որակի ապահովման շրջանակը, ինքնավերլուծության գեկույց գրելու գործընթացը, փորձաքննության կազմակերպումը և որակի արտաքին գնահատումը:

2012թ. դեկտեմբերի 19-ին, ԵՊՀ ներկայացուցիչները և փորձնական խնստիտուցիոնալ հավատարմագրման համար պատասխանատու ՈԱԱԿ-ի համակարգողները, մասնակցել են որակի արտաքին գնահատման վերաբերյալ ամփոփիչ վերապատրաստմանը: Հանդիպման ժամանակ արձագանքներ են ստացվել խնստիտուցիոնալ ինքնավերլուծության գեկույցի սեպակիր տարբերակի վերաբերյալ: Մանրամասն քննարկվել և մեկնաբանվել է գեկույցի առաջին շափանիշը:

2012թ. նոյեմբերից մինչև 2013թ. մարտը Նիդեռլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման կազմակերպությունը (NVAO) տեխնիկական աջակցություն և ուղղորդում է ցուցաբերել ԵՊՀ

ինստիտուցիոնալ ինքնավերլուծության գեկույց գրելու վերաբերյալ: Տեխնիկական աջակցությունը, հիմնականում, իրականացվել է առցանց՝ բացառությամբ 2012թ. դեկտեմբերին կայացած հանդիպմանը:

1-ին փուլում (2012թ. դեկտեմբեր)՝ «Ինքնավերլուծության գեկույցն ավարտին հասցնելը» խորագրով վերապատրաստման ընթացքում քննարկումները ցույց տվեցին, որ համալսարանը, կարծես, հետադարձ կապի հիման վրա զգալի փոփոխություններ չեր իրականացրել:

2-րդ փուլում (2013թ. փետրվար) ԵՊՀ-ն, կարծես, հաշվի չեր առել նախկին դիտողությունները: Ըստիանուր առմամբ՝ տեքստն ավելի համապատասխան էր, առավել լավ ընտրված և, վերջիվերջո, ավելի համահունչ էր դիտարկվող չափանիշերին և չափորոշիչներին: Ակնհայտորեն դեռևս բարելավումների անհրաժեշտություն կար, սակայն առաջխաղացումը նկատելի էր:

3-րդ փուլում (2013թ. մարտ) չնայած տեքստի որակը բարելավված էր, այնուամենայնիվ, համալսարանի առկա իրավիճակի և չափանիշերի բարձր հավակնությունների միջև բացը ակնհայտ էր:

ՈԱԱԿ-ի համակարգողը ողջ ընթացքում հետևում էր ինքնավերլուծության գեկույցի վերաբերյալ մեկնաբանություններին ինչպես էլեկտրոնային նամակագրության միջոցով, այնպես էլ 2012թ. դեկտեմբերին տեղի ունեցած ամփոփիչ վերապատրաստման ժամանակ: Վերջինս, փորձագիտական խմբի կազմի հաստատման ու պայմանագրի կազման գործընթացներից սկսած հետևում էր, որ փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրումն ընթանա ՈԱԱԿ-ի փորձաքննության ձեռնարկին համապատասխան:

2013թ. փետրվարի 13-ին միջազգային փորձագիտական խմբի անդամները Հաագայում հանդիպում են ունեցել՝ ինքնավերլուծական գեկույցը և այցին վերաբերող որոշ կազմակերպչական հարցեր քննարկելու նպատակով:

2013թ. մայիսի 10-ին ՈԱԱԿ համակարգողը կազմակերպել է տեղացի փորձագետների առաջին հանդիպումը՝ ինքնավերլուծության գեկույցը վերլուծելու և մեկնաբանելու նպատակով: Վերլուծությունը հետազայում ներկայացվել է ողջ փորձագիտական խմբին:

2013թ. մայիսի 16-ին փորձագետները կրկին հանդիպել են՝ քննարկելու ինքնավերլուծության գեկույցը և այցի վերջնական ժամանակացույցը: ՈԱԱԿ-ը կազմակերպել է մի շարք հանդիպումներ փորձագիտական խմբի հայաստանյան անդամների հետ՝ ինքնավերլուծության գեկույցը և այցի հետ կապված որոշ խնդիրներ քննարկելու նպատակով: 2013թ. մայիսի 30-ին փորձագիտական խմբին տրամադրվել են դուրսբերված հարցերը/խնդիրները և փորձագետների մեկնաբանությունները:

## **Նախապատրաստական այց**

2013թ. հունիսի 10-ին ՈԱԱԿ-ի ավագ և կրտսեր համակարգողները փորձագիտական խմբի անդամների և ՈԱԱԿ-ի տնօրենի հետ միասին այցելել են համալսարան՝ վերջնականացնելու այցի օրակարգը<sup>5</sup>:

<sup>5</sup>ՀԱՎԵԼՎԱԾ 2. օրակարգ

Այցի ընթացքում քննարկվել են կազմակերպչական, տեխնիկական ապահովածությանը, համաժամանակյա թարգմանությանը վերաբերող հարցերը:

### **Փորձագիտական այց**

Այցին նախորդող օրը փորձագիտական խմբի բոլոր անդամները հավաքվել են ՈԱԱԿ-ում: Հանդիպման ընթացքում փորձագիտական խումբն իր նախնական տպավորություններն է փոխանակել զեկույցի վերաբերյալ, քննարկել և վերջնականացրել դուրսբերված հիմնական հարցերի/ինդիրների ցանկը, որոշել յուրաքանչյուր չափանիշին վերաբերող հարցերի պարզաբանման պատասխանատուին, ինչպես նաև քննարկել հանդիպումները՝ ըստ առանձին թիրախ խմբերի: Այսուհետև փորձագիտական խմբի անդամները քննարկել են գնահատման սանդղակը, որը ներառում է երկու մակարդակ՝ (1) համապատասխանում է չափանիշին, (2) չի համապատասխանում չափանիշին:

Ընդհանուր առմամբ՝ քննադատական մոտեցմամբ ինքնավերլուծական զեկույցը փորձագիտական խումբը համարեց ազնիվ, տեղեկատվություն հաղորդող և արթեքավոր փաստաթուղթ՝ համալսարանում քննարկումներ սկսելու համար՝ չնայած զեկույցի որոշ հատվածներ բավականաչափ հստակ չեն և հանդիպումների ընթացքում լրացուցիչ պարզաբանման անհրաժեշտություն ունեին:

Փորձագիտական այցը տեղի է ունեցել ԵՊՀ 2013թ.-ի հունիսի 17-19-ը<sup>6</sup>:

Այցը մեկնարկել և ավարտվել է համալսարանի ղեկավարության հետ հանդիպումներով: Մնացած հանդիպումներն անցկացվել են կառավարման խորհրդի ներկայացուցիչների, ղեկանների, ամբիոնի վարչների, պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և ուսանողական կազմերի ներկայացուցիչների հետ: Փորձագիտական խումբը հանդիպման մասնակիցներին ընտրել է պատահականության սկզբունքով՝ բացառությամբ ՈԱ վարչության աշխատակիցներից, որը ներկայացել էր ողջ անձնակազմով: Ըստ օրակարգի՝ նախատեսված էր բաց հանդիպում, սակայն ոչ ոք չներկայացավ:

Փորձագիտական խումբը հաստատված օրագարգի համաձայն իրականացրել է բոլոր հանդիպումներն՝ առանց շեղումների: Բացի տարբեր թիրախային խմբերի հետ հանդիպումներից, այցի ընթացում փորձագիտական խումբը կատարել է փաստաթղթերի ուսումնասիրություն և ռեսուրսների դիտարկում՝<sup>7</sup>:

Տարբեր հարցազրույցների ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունն, ինչպես նաև փաստաթղթերի ուսումնասիրության և դիտարկումների հիմնական արդյունքներն ամփոփվել են այցի վերջում կազմակերպված ամփոփիչ հանդիպման ժամանակ: Հիմնական դիտարկումներն ու խորհրդատվությունները, որոնք բխում էին փաստաթղթերի ուսումնասիրությունից և հարցազրույցներից ամփոփվել են փորձագիտական այցի վերջում կատարված նախնական զեկույցում:

Ընդհանուր առմամբ փորձագիտական խումբը կարողացավ պարզաբանել որոշ խնդիրներ այցի ընթացքում՝ օբյեկտիվ գնահատականով հանդիս գալու համար:

<sup>6</sup> Հավելված 3, Փորձագիտական խմբի կողմից դիտարկված ռեսուրսներ

Ինքնավերլուծության գեկույցը շատ տեղեկատվական էր, ազնիվ և լավ կառուցված:

Իջևանի մասնաճյուղը ևս ուշադրության է արժանացել փորձագիտական խմբի կողմից: Ինքնավերլուծության գեկույցում մասնաճյուղի վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում էր, սակայն հանդիպումների ժամանակ շատ փաստեր պարզաբանվեցին: Փորձագիտական խումբը գնահատում է Իջևանի մասնաճյուղի ներկայացուցիչների հետ հանդիպում ունենալու հնարավորությունը:

Փորձագիտական խումբը գնահատում է հանդիպման մասնակիցների բաց քննարկումները, հատկապես ուսանողների հետ հանդիպումը շատ կառուցողական էր: Ավելին՝ զրադարան, լաբորատորիաներ, այլ կենտրոններ կատարված այցերն, ինչպես նաև ուսանողների և անձնակազմի հետ հանդիպելու հնարավորությունը շատ օգտակար էր:

## Հավատարմագրման գեկույց

Այցից հետո կրտսեր համակարգողը մեկուկես ամսվա ընթացքում պատրաստել է հավատարմագրման գեկույցի նախնական տարբերակը և այն ուղարկել փորձագետներին՝ մեկնաբանություններ ստանալու նպատակով: Փորձագիտական գեկույցը պարունակում է փաստեր, դատողություններ, եզրակացություններ, խորհրդատվություն և գնահատական: Փորձագիտական խմբի բոլոր անդամները հետադարձ կապ են ապահովել գեկույցի յուրաքանչյուր շափորոշչի վերաբերյալ: Փորձագետների մեկնաբանությունները հաշվի են առնվել գեկույցի ամփոփման ժամանակ: Նախնական գեկույցը ներկայացվել է համալսարան 2013թ. սեպտեմբերի 12-ին:

2013թ. սեպտեմբերի 26-ին Skype-ով քննարկում է կազմակերպվել փորձագիտական խմբի ղեկավարի, ՈՍԱԿ համակարգողի և բուհի ներկայացուցիչների մասնակցությամբ: Քննարկման ընթացքում պարզաբանվեցին գեկույցում նշված շատ հարցեր:

ԵՊՀ-ն գեկույցի վերաբերյալ իր մեկնաբանություններն ուղարկել է ՈՍԱԿ 04.10.2013թ.-ին: Մեկնաբանությունների հիման վրա գեկույցը համապատասխանաբար վերանայվել է: Զեկույցի վերջնական տարբերակը հաստատվել է փորձագիտական խմբի կողմից 10.10.2013թ.-ին: Վերջնական հաշվետվությունն ուղարկվել է համալսարան 22.10.2013թ.-ին:

## 4. ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

### ՓԱՍՏԵՐ ԵՊՀ-Ի ՄԱՍԻՆ

Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ) հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 1919 թ.-ին՝ Հայաստանի առաջին հանրապետության ստեղծման տարիներին: Իր գոյության ավելի քան 90 տարիների ընթացքում ԵՊՀ-ն տվել է 100 հազարից ավելի շրջանավարտ, ստեղծվել են բազմաթիվ ֆակուլտետներ և հետազոտական կենտրոններ:

Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի (1999 թ.) 28-րդ հոդվածի 8-րդ կետի՝ Երևանի պետական համալսարանը կրթական և գիտամշակութային հաստատություն է, որի կարգավիճակի առանձնահատկությունները սահմանում է ՀՀ Կառավարությունը: ԵՊՀ-ն Հայաստանի և Հարավային Կովկասի բուհերի շարքում մշտապես զրադարձ է առաջատար դիրքեր:

### ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ-ի կրթական ոլորտում նշանակալի կառուցվածքային փոփոխությունները մեկնարկել են դեռևս 1990-ականների կեսերից: 1995 թ.-ին ԵՊՀ-ն վերանայեց իր կրթական որակավորումների կառուցվածքը՝ անցնելով որակավորումների երկաստիճան համակարգի՝ բակալավրի և մագիստրոսի աստիճաններով: 2007 թ.-ին “ECTS” կրեդիտային համակարգը ներդրվեց մագիստրոսի բոլոր ծրագրերում, իսկ մեկ տարի հետո՝ բակալավրի ծրագրերում: Ներկայումս ԵՊՀ-ն իրականացնում է 60 բակալավրի, 130 մագիստրոսի և 70 ասպիրանտական ծրագրեր, որտեղ 2013 թ. հունվարի 1-ի դրությամբ ընդգրկված է շուրջ 18000 ուսանող (13500՝ բակալավրիատում, 4000՝ մագիստրատուրայում և 400՝ ասպիրանտուրայում), որից մոտ 5000-ը՝ հեռակա ուսուցման համակարգում: Համալսարանն ունի 19 ֆակուլտետ՝ 100-ից ավելի ընդհանուր և մասնագիտական ամբիոններով և մեկ մարզային մասնաճյուղ Իջևան քաղաքում՝ 4 ֆակուլտետներով: ԵՊՀ-ն ունի մոտ 3000 աշխատակից, որոնցից 1300-ը ընդգրկված է հիմնական դասախոսական կազմում (166 պրոֆեսոր, 461 դոցենտ, 639 ասիստենտ և դասախոս): Համալսարանում գիտակրթական գործունեություն են իրականացնում նաև Գիտությունների ազգային ակադեմիայի 23 ակադեմիկոս և 26 թղթակից անդամ: Ուսանող-դասախոս հարաբերակցությունը կազմում է 12,5/1: Համալսարանն ունի իր հրատարակչությունն ու գրադարանը:

Բակալավրի ծրագիրը 4 տարի է՝ 240 ECTS կրեդիտ ուսումնական բեռնվածությամբ, իսկ մագիստրոսի ծրագիրը՝ 2 տարի՝ 120 ECTS կրեդիտ ուսումնական բեռնվածությամբ: Համալսարանն ունի նաև հետազոտողի (ասպիրանտական) եռամյա ծրագիր՝ 180 ECTS կրեդիտ գիտառումնական բեռնվածությամբ: ԵՊՀ-ում գործում են գիտական աստիճանաշնորհման 11 մասնագիտական խորհուրդներ:

Բարձրորակ կրթություն ապահովելու նպատակով ԵՊՀ-ն այժմ ստեղծում է Եվրոպական չափորոշիչների և ուղենիշների պահանջներին համապատասխանող որակի ներքին ապահովման համակարգ: Կրթական ծրագրերն աշխատաշուկայի և հասարակության կարիքներին ու պահանջներին համապատասխանեցնելու նպատակով ներդրվել են ուսանողների և շրջանավարտների հետաքարձ կապի արդյունավետ մեխանիզմներ:

Դասախոսական կազմի որակավորման շարունակական բարձրացումն ԵՊՀ առաջնահերթությունների ցանկում է, ինչը բարձրորակ կրթություն տրամադրելու կարևորագույն նախապայման է: Վերջերս ԵՊՀ-ն ներդրեց դասախոսական կազմի որակավորման բարձրացման նոր՝ կրեդիտային հենքով կառուցված կրթագիտական ծրագիրը: Այն կազմված է հատուկ վերապատրաստման դասընթացներից, որոնք միտված են զարգացնելու դասախոսների հմտությունները դասավանդման, ուսումնառության և զնահատման նոր մեթոդների կիրառման ասպարեզում:

ԵՊՀ-ն իր լրացուցիչ կրթության ծրագրերի և դասընթացների միջոցով հասարակության տարբեր խմբերին տրամադրում է նաև մասնագիտական ուսուցում, շարունակական կրթության դասընթացներ և հարատև ուսումնառության այլ հնարավորություններ:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Ներկայումս ԵՊՀ-ում գործում են գիտահետազոտական 1 ինստիտուտ, 24 լաբորատորիա և 9 կենտրոն: Գիտահետազոտական լաբորատորիաների մեծ մասը ներգրավված է բնական գիտությունների տարբեր ոլորտներում իրականացվող հետազոտություններում, ներառյալ՝ ֆիզիկան, քիմիան և կենսաբանությունը: Հումանիտար գիտություններում առաջատար դիրք է գրադարձնում հայագիտությունը:

2012թ. ԵՊՀ-ում հրատարակվել է շուրջ 2000 գիտական հոդված, ինչպես նաև ավելի քան 300 մենագրություն, դասագիրք և ուսումնական ձեռնարկ: ԵՊՀ-ում տարեկան իրականացվում են 85 թեմատիկ գիտահետազոտական նախագծեր, որոնք ֆինանսավորվում են ինչպես տեղական, այնպես էլ միջազգային դրամաշնորհներից:

Համալսարանը հրատարակում է ԵՊՀ գիտական հոդվածների ժողովածուների և տեղեկագրերի 9 շարքեր, որոնցից վեցը՝ հումանիտար և սոցիալ-տնտեսական տարբեր ոլորտներում, իսկ երեքը՝ բնագիտական (մեկը՝ անգլերեն):

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ-ն Հայաստանում կրթության միջազգայնացման առաջատարներից է: Ներկայումս նա համագործակցության շուրջ 200 պայմանագրեր ունի միջազգային գործընկեր համալսարանների և հետազոտական կենտրոնների հետ ամբողջ աշխարհում: Ի լրումն երկկողմ միջրուհական համագործակցության՝ ԵՊՀ-ում տարեկան իրականացվում են ավելի քան 50 միջազգային գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրեր: Դրանք ֆինանսավորվում են տարբեր միջազգային գործակալությունների և հիմնադրամների կողմից, ինչպիսիք են՝ NATO SFP, ANSEF, NFSAT-CRDF, ISTC, Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամ, Ֆոլքսվագեն հիմնադրամ, DAAD, ԲՀՀ, Ռուսական Միջազգային գործակալությունների և այլն: Այժմ ԵՊՀ-ն ակտիվորեն ներգրավված է Եվրամիության կողմից ֆինանսավորվող ՏԵՍՊՈՒՄ ծրագրում: Վերջին տարիներին ԵՊՀ-ն իրականացրել է ՏԵՍՊՈՒՄ-III և ՏԵՍՊՈՒՄ-IV նախագծեր այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են համալսարանական կառավարումը, միջազգայնացումը և որակի ապահովումը, մշակել և արդիականացրել է ուսումնական ծրագրերն ու դասընթացները:

ԵՊՀ-ն «Էրազմուս-Մունիս արտաքին համագործակցության պատուհան» ուսանողական փոխանակման ծրագրերում կոնսորցիում-համալսարանների անդամ է, ինչը հնարավորություն է տալիս ուսանողներին ուսումնառելու եվրոպական համալսարաններում և այնտեղ ստացած կրետիստները որպես իրենց կրթական ծրագրի բարկացուցիչ մաս փոխանցելու համալսարան: ԵՊՀ-ն անդամակցում է նաև «ԱՊՀ ցանցային համալսարան» միջազգային կրթական ցանցին, ինչը հնարավորություն է տալիս ուսանողներին մագիստրատուրայի առաջին տարին ուսումնառելու արտասահմանում, իսկ երկրորդը՝ ԵՊՀ-ում՝ արդյունքում ստանալով դիպլոմ երկու բուհերից:

ԵՊՀ-ն անդամակցում է Համալսարանների միջազգային ընկերակցությանը, Եվրոպական համալսարանների ընկերակցությանը, Եվրասիական համալսարանների ընկերակցությանը, Սևծովյան համալսարանների ցանցին և Համալսարանների նախագահների միջազգային ընկերակցությանը: Գործընկեր համալսարանների հետ համագործակցությունը ծավալվում է հետևյալ ոլորտներում՝

- բուհական գիտնականների, դասախոսական և հետազոտական կազմերի, տեխնիկական և վարչական աշխատակիցների փոխադարձ այցելություններ: ԵՊՀ ավելի քան 400 դասախոսներ և հետազոտողներ յուրաքանչյուր ուստարի ներգրավվում են միջազգային ծրագրերում, կրթական կամ հետազոտական դրամաշնորհային նախագծերում:

— ԵՊՀ-ն խրախուսում է ուսանողների մասնակցությունը փոխանակման ծրագրերում: Վերջին տարիներին ԵՊՀ ավելի քան 300 ուսանողներ ամեն տարի մասնակցում են տարբեր միջազգային ծրագրերի:

ԵՊՀ ուսանողական համակազմի անքակտելի մասն են կազմում օտարերկրյա ուսանողները: ԵՊՀ-ում սովորել են մոտ 7600 օտարերկրյա ուսանողներ՝ ավելի քան 80 երկրներից (3700-ը՝ սփյուռքահայ): Ներկայումս ավելի քան 500 օտարերկրացի ուսանող է սովորում ԵՊՀ-ում, որոնցից մոտ 50-ը ասպիրանտներ են: ԵՊՀ-ում իրենց թեկնածուական ատենախոսություններն են պաշտպանել մոտ 115 օտարերկրացի սովորողներ (35-ը՝ սփյուռքահայ):

## 5. ՓՈՐՁՆԱԿԱՆ ԲՆԱՏԵՏՈՒՅԹՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ

### ՉԱՓԱՆԻՇ I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

#### ՓԱՍՏԵՐ

**1.1.** ԵՊՀ-ն դասական մեծ բուհ է: ՄՈՒՀ-ն ունի հստակ ձևակերպված առաքելություն, որն ընդգրկում է գործունեության երեք հիմնական ուղղություն՝ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ ՈԱԾ-ի սահմանած մակարդակներով (բակալավրի, մագիստրոսի, հետազոտողի որակավորումներ), գիտական հետազոտություններ, հանրային ծառայություններ: Համալսարանի կանոնադրական առաքելությունը և դրանից բխող նպատակները, առաջնահերթություններն ու խնդիրներն ամրագրված են նաև ԵՊՀ (2010-2014թթ.) գարգաման ռազմավարական ծրագրում: ԵՊՀ առաքելության և տեսլականի իրականացումը պայմանավորված են ՌԾ-ում սահմանված 3 ռազմավարական նպատակների իրագործմամբ՝

1. Բարձրորակ կրթություն, որի իրագործման համար սահմանվել են 5 խնդիր՝ 34 ռազմավարություններով:
2. Բարձրակարգ հետազոտություններ և նորարարություն, որի իրականացման համար սահմանվել է 4 խնդիր՝ 28 ռազմավարություններով:
3. Հանրային ներգրավում և ծառայություններ, որի իրականացման համար սահմանվել է 2 խնդիր՝ 16 ռազմավարություններով:

ԲՈՒՀ-ի ներկայացուցիչների մեծամասնությունը կիսում է ռազմավարական նպատակները: Դասախոսներն ու ուսանողները տեղյակ են այդ նպատակներին և, ընդհանուր առմամբ, աջակցում են վերջիններիս իրականացմանը: Ռազմավարական նպատակներից յուրաքանչյուրի կատարման առաջընթացը ստուգելու համար սահմանվել է իրականացման ժամանակացույց-պլան, որը ֆակուլտետների մակարդակում ներառում է ժամանակացույց և առաջընթացի պարբերական գնահատման ցուցիչներ:

**1.2.** Ըստ ինքնավերլուծության գեկույցի՝ համալսարանի առաքելությունն արտացոլում է ներքին և արտաքին շահակիցների կարիքները: ԵՊՀ-ում գործում են շահակիցների կարիքները բացահայտող մի շարք մեխանիզմներ: Այդ մեխանիզմներն են՝

- արտաքին և ներքին շահակիցների ներգրավվածությունն բուհի և վերջինիս ստորաբաժանումների կողեզիալ կառավարման մարմիններում,
- արտաքին և ներքին շահակիցների ներգրավվածություն համալսարանի կառավարման կողեզիալ մարմիններում,
- շահակիցների տարրեր իսմբերի ներկայացուցիչների մասնակցություն համահամալսարանական և ֆակուլտետային զանազան հանձնաժողովներում և հանձնախմբներում,
- ուսանողների ներգրավվածություն համալսարանի կառավարման գործընթացներում,
- համալսարանում գործող ուսանողական կազմակերպությունների գործունեությունը,
- ուսանողների և շրջանավարտների շրջանում անցկացվող հարցումները:

Ներքին և արտաքին շահակիցներն իրենց մասնակցությունն են ունեցել ՌԾ-ի մշակմանը, որի մասին են վկայում հետևյալ փաստերը, առաջին՝ ռազմավարական պլանավորման հանձնախումբը բավականին ներկայացուցական էր, դրանում ներգրավված էին ներկայացուցիչներ ԵՊՀ հիմնական կառույցներից՝ կենտրոնական և ֆակուլտետային մակարդակի վարչական աշխատողներ և դասախոսներ: Երկրորդ՝ ՌԾ-ի և' առաջին, և' երկրորդ նախագծերը շրջանառվել են համալսարանի ներքին և արտաքին շահակիցների շրջանում՝ լայն քննարկման և հետադարձ կապի ստացման նպատակով: Երրորդ՝ ՌԾ-ն քննարկվել և ընդունվել է նախ ԵՊՀ գիտխորհրդի, ապա և ԵՊՀ խորհրդի կողմից, որտեղ ընդգրկված են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցներ: Նախագծի քննարկման ընթացքում շահակիցների կողմից արվել են մի շարք առաջարկություններ և լրացումներ:

- 1.3. ԵՊՀ-ում գործում են ռազմավարական նպատակների իրականացման առաջընթացը գնահատելու մի շարք մեխանիզմներ և ընթացակարգեր: ԵՊՀ ՌԾ-ի իրականացման ընթացքը գնահատելու նպատակով մշակվել է «ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանը»: Փաստաթղթում ներկայացված են յուրաքանչյուր ռազմավարական խնդրի իրագործման համար պլանավորված գործողությունները/միջոցառումները, իրականացման վերջնաժամկետները, պատասխանատու մարմինները կամ անձինք և անհրաժեշտության դեպքում՝ պահանջվող լրացրիչ ռեսուրսները: ՌԾ-ի կատարման առաջընթացի վերահսկման նպատակով երկու անգամ կազմվել և հրատարակվել է ԵՊՀ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՅ) լրակազմը:

## ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ-ն հստակ կառուցվածք ունեցող հաստատություն է՝ համապատասխան առաքելությամբ: Փորձագիտական խումբը արժնորում է, որ համալսարանն իր առջև դրել է հստակ նպատակներ, որոնք լայն տարածում ունեն համալսարանում, ինչպես նաև այն փաստը, որ առաջընթացը ստուգող կատարողականի ցուցիչները երկու անգամ մշակվել և հրապարակվել են: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը ԵՊՀ առաքելությունը բավական ընդհանրական է համարում, որը կարիք ունի մասնավորեցումների՝ արդյունքների մակարդակով: Օրինակ՝ համալսարանն ինչպիսի որակավորումներ ունեցող մասնագետների է ցանկանում կրթել: Ինչպես և կարող է հետազոտությունը նպաստել հանրապետությունում նորարարությունների զարգացմանը, և ինչպիսի հետազոտական ռազմավարություն պետք է կիրառել: Այդ հարցադրումներին տրվելիք պատասխանները կարող են նպաստել ԵՊՀ պրոֆիլի առավել հստակ սահմանմանը: Բացի այդ, փորձագիտական խումբը նկատել է մասնագիտությունների և մասնագիտացումների կրթական ծրագրերում որոշակի համընկնումներ, որը նույնպես ազդում է ԵՊՀ պրոֆիլի վրա: Եթե ներկայիս աշխատաշուկան հետազոտություն կատարող գիտնականների փոխարեն նեղ մասնագիտացված մասնագետների պահանջ ունենա, ապա համալսարանը պետք է ներառի այդ պահանջը ռազմավարական պլանի հեռանկարում:

ԵՊՀ-ն փորձում է տարաբնույթ միջոցներով բացահայտել, քննարկել և վերլուծել տաքեր շահակիցների կարիքները: Ներքին շահակիցների ներգրավվածությունը ռազմավարական նպատակների ձևավորման գործում ակնառու է: Մակարդակ արտաքին շահակիցների ներգրավվածության մեխանիզմները, լինի դա աշխատաշուկա թե շրջանավարտներ, կարիք ունեն բարելավման. կազմակերպված քննարկումները, կարծես, բացակայում են: Շահակիցների

ներգրավվման մեխանիզմների արդյունավետությունը հասկանալու համար բացակայում են բավարար հիմքերը և խորքային վերլուծությունը:

ԵՊՀ-ն քաջատեղյակ է աշխատաշուկայի կարիքներն ուսումնասիրելու անհրաժեշտությանը, որպեսզի բարելավի դրանց կապը մասնագիտության ծրագրերին: Փորձագիտական խումբը, սակայն, գիտակցում է գործազրկության առկա խնդիրը, և որ այս իրավիճակը դժվարացնում է ԵՊՀ-ի, ինչպես նաև հայաստանյան բոլոր այլ բուհ-երի դրությունը՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխանելու հարցում: Այնուամենայնիվ, լրացուցիչ ջանքներ են պահանջվում գործատուների և շրջանավարտների ներգրավման համար:

Կատարողականի ցուցիչները գնահատանքի են արժանացել փորձագիտական խմբի կողմից. այս ցուցիչների հրապարակումը նպաստում է ԵՊՀ թափանցիկությանը: Փորձագիտական խումբը խրախուսում է ԵՊՀ-ին՝ ուսումնավարական նպատակների ձեռքբերումների գնահատման ցուցիչները ներառել ուսումնավարական ծրագրում: Այս ձևով պլանը կլինի առավել հստակ, իսկ նպատակների իրականացմանը միտված հաջորդ քայլերը կլինեն հնարավոր և տեսանելի ԵՊՀ հանրության համար:

Կարևոր է նշել, որ տարեկան բյուջեն թույլ է կապակցված ուսումնավարական նպատակներին, ինչը ուսումնավարական պլանի իրագործման շուրջ հիմնական մտահոգությունն է: Ֆինանսական պլանավորումը պետք է ավելի համահունչ լինի ուսումնավարական ծրագրին, ինչպես նաև պետք է առկա լինեն դրա գնահատման ցուցիչները:

**Հաշվի առնելով վերոնշյալ փաստարկը՝** փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՊՀ-ն բավարարում է 1-ին չափանիշի պահանջներին: Առկա են, սակայն, որոշ նկատառումներ: Ընդհանուր առմամբ՝ ԵՊՀ-ն հստակ կառուցվածք ունեցող հաստատություն է՝ համապատասխան առաքելությամբ, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ առաքելությունը բավական ընդհանրական է և պահանջում է մասնավորեցումների՝ արդյունքների մակարդակով: Փորձագիտական խումբը նկատեց ներքին շահակիցների ներգրավման բավարար փաստեր, սակայն արտաքին շահակիցների ներգրավվածությունը, կարծես, սահմանափակ է տարբեր խորհուրդներում: Արտաքին շահակիցների հետ հարորդակցումը հիմնականում ոչ պաշտոնական է: Կարևոր է նշել, որ տարեկան բյուջեն թույլ է կապված ուսումնավարական նպատակներին, ինչը ուսումնավարական պլանի իրագործման մասին հիմնական մտահոգությունն է:

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. Փորձագիտական խումբը չափանիշ 1-ը գնահատում է բավարար:**

### **ԽՈՐՀՈՒՄԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

Խորհուրդ է տրվում՝

- վերաձևակերպել առաքելությունը և ակնկալվող վերջնարդյունքների մակարդակում ավելի հստակ դարձնել,
- ուսումնավարական պլանում ներառել ուսումնավարական նպատակների ձեռքբերման գնահատման ցուցիչներ, որոնք ուսումնավարական պլանն ավելի հստակ կդարձնեն, իսկ նպատակների իրականացմանը միտված հաջորդ գործողությունները՝ հնարավոր,
- ուսումնառության վերջնարդյունքների մակարդակում հստակ տարանջատել մասնագիտությունների և մասնագիտացումների կրթական ծրագրերը,
- բարելավել շահակիցների (հատկապես արտաքին) ներգրավվածությունը,
- վերլուծել շահակիցների ներգրավման արդյունավետությունը՝ հատուկ շեշտադրում կատարելով շրջանավարտների և աշխատաշուկայի ներկայացուցիչների ներգրավվածությանը:

## ՉԱՓԱՆԻՇ Բ: ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մուհի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման կրթիկայի կանոնները:

### ՓԱՍՏԵՐ

#### 2.1. ԵՊՀ կառավարման համակարգն ունի երեք մակարդակ՝

1. պետության մասնակցությունն ԵՊՀ կառավարմանը,
2. համալսարանական մարմինների և կառույցների միջոցով կառավարում,
3. ստորաբաժանումների կառավարում:

ԵՊՀ կառավարումը համահամալսարանական մարմինների (խորհուրդ, գիտական խորհուրդ, ռեկտոր), ինչպես նաև կառավարման կենտրոնական կառույցների (պրոեկտորներ, վարչություններ, բաժիններ) միջոցով իրականացվող ընթացիկ կառավարումն է: Համահամալսարանական կառավարումը կառուցված է ինքնակառավարման և ինքնավարության, կոլեգիալ ու միանձնյա կառավարման զուգակցման սկզբունքների վրա:

Ակնհայտ է, որ համալսարանն առաջնորդվում է ՀՀ մի շաբթ օրենքներով իր կառավարման համակարգի հետագա բարելավման նպատակով: ԵՊՀ-ն մշակել է կառավարման համակարգի բարեփոխումների ծրագիր: ԵՊՀ ՌԾ ընթացիկ գերակայություններից է համարվում համալսարանի արդյունավետության բարձրացումը՝ արդյունավետ կառավարումը: Նոր կառավարման համակարգը, կարծես, ընդունելի է համալսարանականների շրջանում: Գործող ապակենտրոնացված միավորներն ունեն որոշակի անկախություն, կարողությունները համապատասխանաբար բաշխված են զուգահեռ կոլեգիալ կառավարման մարմիններում:

ԵՊՀ ֆինանսական քաղաքականությունն իրականացվում է օրենսդրության և ԵՊՀ կարգավորող փաստաթղթերին համապատասխան: Ֆինանսական առողջականությունը համապատասխան: ԵՊՀ աշխատակիցների թափուր պաշտոնների գրադարձումը կարգավորվում է “ԵՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի մրցույթային ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգով”:

#### 2.2. Ներքին շահակիցները՝ դասախոսները և ուսանողները ներգրավված են կառավարման տարբեր մարմիններում և նպաստում են որոշումների կայացմանը: Այնուամենայնիվ, ինքնավերլուծության գեկույցում ՍՈՒՀ-ը որպես թերություն նշել է ուսանողների թերի պատրաստվածությունը՝ գիտելիքի և փորձի պակասը այդ մարմիններում աշխատելու համար և կոլեգիալ կառավարման մարմիններում դասախոսական անձնակազմի պասիվ մասնակցությունը: ԵՊՀ-ն ցանկանում է ընդլայնել ուսանողների ներգրավվածությունը և հզորացնել ուսանողական մարմինները: Դեկաններից բացի համալսարանի դեկավարման մարմիններում դասախոսական կազմի ներկայացուցիչների քանակի մեծացման հարցում նախաձեռնություն հանդես չի բերվել:

#### 2.3. Պլանավորումն ԵՊՀ-ում իրականացվում է երկու մակարդակում՝ ռազմավարական պլանավորում և ընթացիկ ուսումնական և գիտական գործունեության տարեկան պլանավորում: Գործառնական պլանավորման մակարդակում համալսարանն օգտագործում է այնպիսի գործիքներ, ինչպիսին են՝ ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը, ուսումնական ժամանակացույցները և դասացուցակները: Պլանավորման այլ գործիքներ են ներհամալսարանական նորմատիվ ակտերը, գիտահետազոտական գործունեության պլանավորումն ու ֆակուլտետների կողմից

ուսումնամեթոդական վարչություն փաստաթղթերի ներկայացման համար ըստ ամիսների սահմանված վերջնաժամկետները:

- 2.4.** Ինքնավերլուծության գեկույցում ԵՊՀ-ն որպես հավաստի որոշումների կայացման համար տվյալների հավաքագրման մեխանիզմի հիմք նշել է կանխատեսումը, պլանավորումը, կազմակերպումը, ընդհանուր դեկավորությունը, վերահսկողությունն ու հաշվետվողականությունը: Կանխատեսումը հնարավորություն է ընձեռում ուսումնասիրել արտաքին և ներքին գործոնները, իսկ մյուսները միտված են ներքին տվյալների հավաքմանը: Տեղեկատվության հավաքումը ներառում է SS գործիքներ, իսկ գործունեության որոշ ոլորտներում տվյալները պարբերաբար հավաքվում են: Ինչպես օրինակ՝ (i) “Super Vision” համակարգը գրանցում է ուսանողների ակադեմիական առաջնադաշտումը և շարժունությունը, (ii) կատարողականի առանցքային ցուցիչները սահմանում են ռազմավարական առաջնադաշտումը և (iii) ներքեցից վերև հաշվետվության համակարգը տեղեկատվություն է տրամադրում ամբիոնների կրթական գիործունեության վերաբերյալ և ծառայում է որակի վերահսկման գործընթացի իրականացման համար անհրաժեշտ համապատասխան տվյալների հավաքմանը: Այնուամենայնիվ, ենթակառուցվածքային մակարդակով տվյալների այս ողջ ներառումը տվյալների կառավարման համակարգում զգալիորեն կրաքելավի համալսարանի կառավարումը բոլոր մակարդակներում: Նման միասնական համակարգի մշակմանը խոշընդոտում է ֆինանսական ռեսուրսների պակասը:
- 2.5.** Համալսարանական կառավարումը հիմնված է իր ինքնավարության վրա՝ միանձնյա և կողեզիալ կառավարման սկզբունքների գործակցմամբ: ԵՊՀ կառավարումը համալսարանի առանձին ստորաբաժանումների մակարդակում դրսևրում է որպես իրարահաջորդ գործընթացների ամբողջություն՝ ա) հիմնախնդիրների վերհանում, բ) բարելավող միջոցառումների մշակում, գ) իրականացման համար որոշման ընդունում, դ) որոշման կատարում, ե) կատարման նկատմամբ վերահսկողություն և գնահատում: Նշված գործընթացների իրականացման համար ընդունվել են կառավարման մարմինների գործառույթները և աշխատակարգերը կարգավորող բազմաթիվ կանոնակարգեր, ընթացակարգեր, այլ իրավական ակտեր:
- 2.6.** ԵՊՀ-ն տեղեկատվություն է տրամադրում իր կրթական ծրագրերի վերաբերյալ, այդ թվում՝ ուսումնառության վերջնարդյունքների, գնահատման չափանիշերի և դասավանդման ու ուսումնառության մեթոդների վերաբերյալ: Բացի այդ առկա են ուսումնական ձեռնարկներ և տեղեկատվությամբ հարուստ վեբ-կայք: Պարբերաբար կազմակերպվում են տեղեկատվական միջոցառումներ: Դրան գործադրություն է կատարակավել են ԳԱՅ-եր, իսկ ինքնավերլուծության գեկույցը քննարկվել է տարբեր շահակիցների շրջանում: Վերջինս համապատասխանում է ծրագրերի որակի վերաբերյալ անկողմնակալ տեղեկատվության տրամադրման սկզբունքներին: Այսպիսով, ծրագրերի որակի ապահովման ներքին համակարգը լավ մշակված է կրթական-մեթոդաբանական, որակի ապահովման հանձնաժողովների կողմից, իսկ ամբիոնների և ֆակուլտետների մակարդակով քննարկումների արդյունքում գեկույցը հաստատվել է Գիտխորհրդի կողմից: Այս համակարգը ներառում է ներքին գործընկերային գնահատման սկզբունքը:
- 2.7.** Կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տարածման ԵՊՀ քաղաքականությունը կառուցված է 2 սկզբունքների վրա: Առաջինն ուղղված է դիմորդներին մասնագիտական կողմնորոշման նպատակով կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրմանը և չի պարունակում քանակական և որակական տվյալներ, ինչպես նաև չի անդրադարձում

վերջիններիս արդյունավետությանը կամ աշխատաշուկայի պահանջներին համապատասխանությանը: Երկրորդը քննարկում է տարբեր մեխանիզմներ և ընթացակարգեր, որոնք միտված են գնահատելու կրթական ծրագրերի շրջանակներում իրականացված հրատարակումները, ինչպես նաև հարցումների միջոցով պարզելու հասարակությանը կարծիքը և ուսանողների մասնակցությունը: Այնուամենայնիվ, անդրադարձ չի կատարվում նոր կրթական ծրագրերին, վերջիններիս որակավորումներին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանությանը (որակական և քանակական):

## ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ կառավարման համակարգը կառավարման ընդունելի համակարգ է գիտակրթական միջավայրում: Գործադիր իշխանությունն, ըստ ամենայնի, համամասնաբար է բաշխված և հավասարակշռված կառավարման “վերահսկման” կողեզրակ մարմիններում: Այնուամենայնիվ, կառավարման համակարգը բավական խճճված է, և ներկայումս դրա արդյունավետության մշտադիտարկումը և բարեփոխումների իրականացումը ժամանակավոր գործընթացներ են: Ներկա անցումային փուլում կազմակերպչական կառուցվածքի արդյունավետությունը փորձագիտական խմբի կարևոր մտահոգություններից է, որը պահանջում է քննադատական մշտադիտարկում՝ որպես որակի ապահովման համակարգի մաս: Որոշումների ընդունման գործընթացը պետք է լինի առավել բափանցիկ, առավել, քանի որ բյուջեի բաշխումը կարծես չի համապատասխանում ռազմավարական պլանին:

Ներքին շահակիցները (աշխատակազմը և ուսանողները) ներգրավված են կառավարման տարբեր մարմիններում: Հատկապես ուսանողների ներգրավածությունը կառավարման բոլոր մակարդակներում շատ գնահատելի է: Փորձագիտական խումբն արձանագրել է, որ ուսանողության ձայնը լսելի է և ազդում է որոշումների ընդունման վրա: Քանի որ անձնակազմը նույնպես ներգրավված է որոշումների ընդունման բոլոր մակարդակներում, ԵՊՀ կառավարման օդակների կապերը ներքին շահակիցների հետ ըստ ամենայնի բավարար են, չնայած հաշվի առնելով վերոնշյալ բացթողումները՝ ԵՊՀ-ում վերջինների ազդեցության չափը կարծես սահմանափակ է՝ ի համեմատություն, ասենք, պետության ազդեցությանը: Արդեն նշվել է արտաքին շահակիցների հետ (աշխատաշուկա, շրջանավարտներ և ձեռնարկություններ) կապերի սակավության մասին (տես 5.1.2): Փորձագիտական խումբը շեշտադրում է, որ ռազմավարական հիմնախնդիրների իրականացումը, ինչպիսին է՝ հետազոտությանը միտված կրթությունը և ուսանողակենտրոն ուսումնառությունը, պահանջում է ամուր կապեր աշխատաշուկայի հետ և, հետևաբար, կառուցվածքային ներդրում պրոֆեսորադասախոսական անձակազմի կողմից:

Ռազմավարական նպատակների առկայությունը հստակ է գործառնական մակարդակում: Այնուամենայնիվ, համալսարանը չի քննարկում պլանավորման արդյունավետությունը, որպես օրինակ՝ ներկայացնելով լավագույն փորձը: Ավելին, փորձագիտական խումբն արձանագրել է, որ ԵՊՀ ինքնազնահատման գեկույցի յուրաքանչյուր չափանիշի ավարտին նշված չեն ոիսկերն ու հնարավորությունները: Ըիսկերի և հնարավորությունների ախտորոշումը քաղաքականության մշակման կենսական տարրերից է:

Փորձագիտական խումբը գնահատում է՝ ռազմավարական տվյալների հավաքման գործում կատարված առաջընթացը: Խումբը միանում է համալսարանի դիտարկմանն առ այն, որ տվյալների հավաքումը դեռևս ամբողջովին ներդրված չէ և նկատում, որ տվյալների հավաքումը տեսանելիորեն հարմարեցված չէ ռազմավարական ծրագրին:

Մի շարք քաղաքականությունների և սկզբունքների նկարագրությունը չի նշականում, որ այդ մեխանիզմներն աշխատում են գործնականում: Ամբողջական պլանավորում-իրականացում-ստուգում-բարելավում (ՊԻՍԲ) շրջափուլը պահանջում է համալսարանի, ֆակուլտետների և

ամբիոնների մակարդակով՝ ծրագրերի, որոշումների, թիրախների, գործողությունների, առանցքային ցուցիչների, մշտադիտարկման և հետադարձ կապի հաշվետվությունների, քննադատական վերլուծությունների և բարելավումների միասնական համակարգ: Այսպիսի միասնական շրջափուլ չի ներկայացվել փորձագիտական խմբին՝ համաձայն ԵՊՀ այն նկատառմանը, որ այս շրջափուլը դեռևս չի փակվել:

Փորձագիտական խումբն արժեորում է գործող փոխգնահատումը և ծրագրերի վերանայումը: Խումբը հանդիպել է այս գնահատման արդյունքում կատարված բարեփոխումների բազմաթիվ օրինակների: Փորձագիտական խումբն, այնուամենայնիվ, արձանագրել է, որ ինքնազնահատման զեկույցում արդեն նշվել էին բացթողումները, այն է՝ բարեփոխումների իրականացման համակարգված հաշորդական քայլերի բացակայությունը, ինչին քաջատեղյակ է համալսարանը: Ծրագրերի որակի վերահսկման համակարգը կշահի անկախ փորձագիտական գնահատումից: Սա նախապայման է Եվրոպական բարձրագույն կրթական տարածք ինտեգրվելու համար: Այս առումով փորձագիտական խումբը ողջունում է ԵՊՀ նախաձեռնությունը՝ դիմելու ինստիտուցիոնալ հավատարմագրման և ընդգծում այն գաղափարը, որ ինքնազնահատման զեկույցը ողջ բուհական հանրության համար առաջին ռազմավարական նշանակության փաստաթուղթ է, այլ ոչ թե հավատարմագրման համար բյուրոկրատական նախապայման:

Փորձագիտական խմբին տեղեկացրել են ՀՀ-ում գիտնականների համար թույլ գարզացած աշխատաշուկայի վերաբերյալ, ինչպես նաև նկատվել են արտաքին գործատուների հետ ակտիվ շփումների բացակայություն: Ուսանողները դժգոհում են աշխատատեղերի բացակայությունից, և շատերն իրենց գիտական կարիերան տեսնում են արտասահմանում: Քանի որ զբաղվածության խնդիրն ավելի շատ միջազգային, քան տեղական խնդիր է, և քանի որ տնտեսական իրավիճակը չի վերահսկվում ԵՊՀ կողմից, սա փորձագիտական խմբի լիազորության շրջանակներից դուրս է: Այուամենայնիվ, փորձագիտական խումբը հանդիպեց հայկական գիտակրթական ապագայով մոտիվացված երիտասարդների, և կոչ է անում ԵՊՀ-ին՝ ապագա գիտական կարիերա ունեցող ուսանողների համար ոխսելու ու հնարավորությունները վերածել հուսադրող հեռանկարի:

**Հաշվի առնելով վերոնշյալ փաստարկը՝** փորձագիտական խումբը գտնում է, որ չափանիշ 2-ը բավարարում է պահանջներին, սակայն ունի որոշ նկատառումներ: Փորձագիտական խումբը գտնում է, որ կառավարման համակարգն ընդունելի է և կոլեգիալ: Ռազմավարական նպատակները բավականաչափ գործառնական են, և ներքին շահակիցները (աշխատակազմ և ուսանողներ) ներգրավված են կառավարման տարբեր մարմիններում, այնուամենայնիվ, ինչպես արդեն նշվել է, արտաքին շակահիցների հետ հաղորդակցման մեջ կան բացթողումներ: Առկա է տվյալների հավաքման մեխանիզմ, որը, սակայն, դեռևս ամբողջովին մշակված և ներդրված չէ: Ծրագրերի որակի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ներքին կառուցվածքը, որպես այդպիսին, բավական խճանքած է և կրարելավվի պարբերաբար արտաքին անկախ գնահատմամբ: Եզրափակելով կարելի է նշել, որ կառավարման համակարգը բավականաչափ արդյունավետ է՝ առաքելությունն իրականացնելու համար:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. Փորձագիտական խումբը չափանիշ 2-ը գնահատում է բավարար՝ որոշակի նկատառումներով**

## ԽՈՐՀՄԴԱՎՈՒԹՅՈՒՆ

Խորհուրդ է տրվում՝

— պարզեցնել համալսարանի կազմակերպական կառուցվածքը: Ի վերջո համալսարանը կարող է ընտրել ոչ ուռացված կազմակերպական կառույցի մի տարբերակ, որը կշարունակի հիմնվել կոլեգիալ ակադեմիական մշակույթի վրա,

- բյուջեի բաշխումը համապատասխանեցնել ռազմավարական պլանին,
- կառավարման համակարգն այնպէս հարմարեցնել, որպէսզի դասախոսական կազմի ներդրումը կրթական քաղաքականությունների մշակման, կիրարկման և վերանայման գործընթացներում լինի ավելի մեծ:
- կիրառել որսկերի և հնարավորությունների գնահատման ցուցչավորումը որպէս պարբերական պլանավորման գործիք,
- ռազմավարական պլանը որտեղ հնարավոր է վերաբարգմանել քանակական թիրախների, և տվյալների հավաքման այնպիսի քաղաքականություն իրագործել, որը կնպաստի ռազմավարությանը կազմակերպված ձևով,
- կառավարման բոլոր մակարդակներում փակել ՊԻՄԲ շրջափուլ՝ ռազմավարական պլանի նպատակներին արդյունավետորեն հասնելու նպատակով,
- ՈԱ համակարգում պարտադիր կերպով ներդնել արտաքին փորձագիտական գնահատում:

### **ՉԱՓԱՆԻՇ III: ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ**

**ՄՎԾ-ները** համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

#### **ՓԱՍՏԵՐ**

1. Համալսարանի 19 ֆակուլտետներում և իջևանի մասնաճյուղում իրականացվում է մոտ 260 կրթական ծրագիր, որոնցից 60-ը՝ բակալավրի, 130-ը՝ մագիստրոսի, 70-ը՝ ասպիրանտուրայի կրթական աստիճաններում: Կրթական ծրագրերը համահունչ են ԵՊՀ առաքելությանը: 1995/1996 ուստարում ԵՊՀ-ն անցում կատարեց 5-ամյա կրթությամբ միաստիճան համակարգից բակալավրի և մագիստրոսի որակավորումներով երկաստիճան կրթական համակարգին: Այնուամենայնիվ, նոր մոտեցման ներդրման փորձի պակասի պատճառով, փոփոխությունները կատարվեցին հիմնականում կառուցվածքային մակարդակով՝ չանդրադառնալով բովանդակային հարցերին: Այդ իսկ պատճառով, հիմք ընդունելով ներքին գնահատումների արդյունքները, համալսարանը ստիպված էր վերանայել իր մոտեցումը 2000-2001թթ.-ին: 2006թ.-ին ԵՊՀ գիտական խորհուրդը հաստատեց Երևանի պետական համալսարանում կրեդիտային համակարգի ներդրման ժամանակացույցը, որը նախատեսում էր աստիճանական անցում կրեդիտային հենքով ուսումնառության կազմակերպմանը նախ մագիստրոսի (2007թ.-ից), ապա բակալավրի (2008թ.-ից)՝ կրթական ծրագրերում: Մի շարք նոր կրթական ծրագրեր մշակվեցին, որոնք միտված էին բավարարելու աշխատաշուկայի պահանջները և նպաստելու միջազգային համագործակցությանը: 2011-2012թթ. 3-րդ անգամ իրականացվեցին ուսումնական բարեփոխումներ: Ավելին, ԵՊՀ-ն որդեգրեց ուսումնական պլանների զարգացման վերջնարդյունքահեն մոտեցումը:
2. Համալսարանը որդեգրել է ուսանողակենտրոն մոտեցումը և քայլեր է ձեռնարկում համապատասխանեցնելու դասավանդման մեթոդները ուսումնառության վերջնարդյունքներին: Գրեթե բոլոր կրթական ծրագրերում նկարագրված են ակնկալվող ուսումնառության

վերջնարդյունքները: Որոշ հարցաշարեր են լրացվում այս մոտեցումների արդյունավետությունը ստուգելու նպատակով:

- 3.3. Կրթական ծրագրերի վերանայման հետ մեկտեղ ուսանողների գնահատման համակարգը ևս վերանայվել է ակադեմիական ազնվություն ապահովելու նպատակով: Փորձ է արվել ուսումնառության վերջնարդյունքները կապել գնահատման մեթոդների հետ: Վերանայումները ուղեկցվել են կառավարման տարբեր մակարդակներում իրականացվող քննարկումներով: Գնահատման համակարգի արդյունավետության և ամբողջական պատկերը հասկանալու համար հարցում է անցկացվել երկու հիմնական շահակիցների՝ 8500 ուսանողների և 1100 դասախոսների շրջանում: Հարցման արդյունքում պարզվել է, որ դասախոսները և ուսանողները հիմնականում ընդունելի են համարում գնահատման գործող կարգը, սակայն գտնում են, որ այն որոշակի լրամշակումների և փոփոխությունների կարիք ունի: Միևնույն ժամանակ, ուսանողների գնահատման համակարգը ՌԱ Եվրոպական չափորոշիչների և ուղենիշների պահանջներին համապատասխանեցնելու նպատակով՝ ԵՊՀ-ն իրականացրել է ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման համակարգի բարեփոխման գործընթաց: Շեշտվել են ինչպես շրջանավարտին ներկայացվող պահանջները, այնպես էլ վերջնարդյունքահեն գնահատումը:
- 3.4. Վերոնշյալ կառուցվածքային և կրթական բարեփոխումների հիմնական նպատակն ուսանողների և դասախոսների շարժունությանը խթանելն է, ինչպես համալսարանի շրջանակներում, այնպես էլ ակադեմիական աշխարհում: Կրթական ծրագրերը վերանայվել են հնարավորինս չափ կամընտրական դասընթացներ ներառելու նպատակով (բակալավրի մակարդակում ուսումնական պլանի 10-15%-ը, մագիստրատուրայում՝ 25%-ը): Այնուամենայնիվ, ուսումնական պլանի կառուցվածքի կոշտությունը խոչընդոտում է ուսանողների շարժունությանը: Համալսարանը մտադիր է անցում կատարել անհատական համակարգի և քայլեր է ձեռնարկում ուսանողների շարժունությունը խթանելու համար: Մյուս կողմից, միջազգային գործընկերների հետ մշակվել և առաջարկվում են համատեղ և կրկնակի դիպլոմի ծրագրեր, ենթադրվում է ծրագրերի որոշակի կապակցում:
- 3.5. ԵՊՀ գիտական խորհուրդը 2011թ.-ին հաստատեց “ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգը”՝ համաձայն որի բոլոր նոր ստեղծվող ծրագրերը պետք է անցնեն հաստատման գործընթաց: Բակալավրի ծրագրերի համար պարբերաբար վերանայման ժամանակահատված սահմանվել է 5-7 տարին, մագիստրոսի կրթական ծրագրերի համար՝ 3-5 տարի: Համաշխարհային բանկի ծրագրի շրջանակներում իրականացվել են վերապատրաստումներ պատասխանատու հանձնաժողովների հետ: Հիմնվել են որակի ապահովման այնպիսի կառույցներ ինչպիսիք են որակի ապահովման կառույցն ու որակի ապահովման (ֆակուլտետային) հանձնաժողովները:

## ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Փորձագիտական խումբը բարձր է գնահատում ԵՊՀ-ի ներկա և անցյալ ջանքերը՝ Եվրոպական կրթական տարածք մուտք գործելու ուղղությամբ: Հարաբերականորեն կարձ ժամանակում կատարվել են կառուցվածքային և բովանդակային բազմաթիվ փոփոխություններ: Այնուամենայնիվ, որոշ ոլորտներում գիտակրթական հանրությունը պետք է գտնի իր տեղն այս նոր կառուցվածքում: Համալսարանը կարող է օգտագործել ԵՊՀ տարբեր մակարդակներում առկա լավագույն փորձն առավել լայն կերպով: Լավագույն փորձի տարածումը դեկանների շրջանում կարող է լինել լավ սկիզբ՝ համալսարանում այդ արժեքների հետագա տարածման համար: Լավագույն փորձի օրինակները կարող են տեղադրվել նաև ԵՊՀ ներքին առցանց համակարգում:

Մի խոսքով՝ համալսարանը պետք է մշակի լավագույն փորձի օրինակները հայտնաբերելու և տարածելու մեխանիզմներ:

Արդիականացումն աստիճանական գործընթաց է աշխատաշուկայում, որը չի կարող կատարվել վերևից ներքև սահմանվող ակտերի և փաստաթղթերի միջոցով:

Ուսանողակենտրոն ուսումնառության ներդրումը վերջնարդյունքների վրա հիմնված դասավանդման հետ սերտ կապի մեջ (դեպի հետազոտություն կողմնորոշված կրթության համատեքստում) ակադեմիական կրթության արդիականացման կարևորագույն կողմն է: Կառուցվածքային փոփոխություններից հետո այժմ ուսանողակենտրոն ուսումնառություն իրականացնելու ԵՊՀ հավակնությունը պետք է առաջնահերթը լինի համալսարանում: Փորձագիտական խումբը գիտակցում է, որ դրա ներդրումը բարդ գործընթաց է: Կրթության անցումային փուլը դեռևս չի ավարտվել, և լուրջ ջանք է պահանջվում այս գործընթացում առաջընթաց գրանցելու համար: Փորձագիտական խումբն, այնուամենայնիվ, արձանագրել է բավարար ցուցումներ՝ այս ուղղությամբ կատարվող առաջին էական քայլերի համար: Ակնհայտորեն, ԵՊՀ-ն տեղյակ է առկա բացթողումներին և ձեռնարկում է այնպիսի գործողություններ, ինչպիսիք են, օրինակ, «դասավանդման և ուսումնառության բաժնի» ստեղծումը, առկա դիդակտիկ լավագույն փորձի տարածումը, գնահատման ցուցիչների մշակումը և դրանց արդյունավետության ստուգումը, դասախոսների վերապատրաստումը, կրթական փորձաքննության ներդրումը և համապատասխան ուսումնական նյութերի մշակումը: ԵՊՀ-ն նպատակադրվել է բարելավվել իրավիճակը 2-3 տարվա ընթացքում: Անձնակազմի և հատկապես ուսանողների համապատասխան ներգրավումը գործընթացում թույլ կտա խուսափել թյուրիմացություններից և հիմարավություններից: Հաշվի առնելով գնահատման համակարգում կատարված փոփոխությունները՝ փորձագիտական խումբը չի կարող քննադատաբար գնահատել երկարաժամկետ արդյունքները: Փորձագիտական խումբն առկա համակարգը համարում է օբյեկտիվ, իսկ գնահատման չափանիշերը՝ թափանցիկ: Այդուհանդեռ, գնահատման օբյեկտիվությունը կարող է բարելավվել: ԵՊՀ կողմից գնահատման համակարգին հատկացվող շարունակական ուշադրությունը դրական է, քանի որ դրա ազդեցությունը կարևոր է ինչպես համալսարանի, այնպես էլ դրասի (Եվրոպա) համար: Դետք է նաև նշել, որ այս հարցի շուտափույթ կարգավորումն ունի կենսական նշանակություն: Շարունակական փոփոխությունները խոչընդոտում են արդյունավետության համապատասխան գնահատումը և ի վերջո դեմոտիվացնում անձնակազմին և ուսանողությանը: Փորձագիտական խումբն արձանագրել է, որ ԵՊՀ-ն համապատասխան ուշադրություն է դարձնում գրագորության խնդրին, այնուամենայնիվ, ներկա իրադրությունը կարող է բարելավվել տեխնիկական (հնարավորության դեպքում համապատասխան համակարգչային ծրագրերի օգտագործում) և ուսումնական (ակադեմիական ազնվության շրջանակներում գրագորության դեմ պայքարի ներդրում) մակարդակներում:

Որպես շարժունության խրախուսման միջոց՝ փորձագիտական խումբը ցանկանում է ավելացնել միջառարկայական ծրագրերի առաջարկումը: Առկա են որոշ լավ օրինակներ համալսարանի ներսում: Ավելի շատ միջառարկայական ծրագրերի մշակումը պետք է կրպիչուսիք: Փորձագիտական խումբը այսպիսի ծրագրերը դիտում է որպես ապագայի մաս, քանի որ գիտության մեջ բազմաթիվ հարցերի պատասխաններ կարող են տրվել միմիայն միջառարկայական համագործակցության միջոցով: Նոր միջառակայական ծրագրերի մշակման համար ֆակուլտետները պետք է լինեն բաց և ճկուն, քանի որ այդ ձևով ուսանողներին հնարավորություն է տրվում անցնել իրենց առակայական շրջանակի սահմաններից:

Ակնհայտորեն վաղ է փորձագիտական խմբի այցի միջոցով ԵՊՀ ծրագրերի վերանայումը և բարելավումը պատշաճ գնահատելը՝ հաշվի առնելով վերջին զարգացումները: Քանի որ, ինչպես նշված է, ինքնազնահատման գեկուցում, կրթական ծրագրերի որակի ապահովման նոր

գործընթացները դեռևս ամբողջովին չեն գործում: Այդուհանդերձ, ԵՊՀ-ն ճիշտ ուղու վրա է: Ծրագրերի վերանայումը պահանջում է տեղական և միջազգային փորձի առկայություն: Կենսաբանության բակալավրի ծրագրի և գենետիկայի մագիստրոսական ծրագրի դիմումը հավատարմագրման համար և հաջորդիվ փորձագիտական խմբի այցը լավ սկիզբ է: Փորձագիտական խումբը համոզված է, որ այս ոլորտում կուտակվելիք փորձը կստեղծի համապատասխան շրջանակ՝ ԵՊՀ ուսումնական պլանների որակի վերահսկման համար:

**Հաշվի առնելով վերոնշյալ փաստարկը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ բոլոր ֆակուլտետներն առաջարկում են ծրագրեր, որոնք ունեն մանրամասն ձևակերպված և լավ համակարգված ուսումնական պլաններ՝ հիմնված առարկաների վրա: Նախատեսվող ուսումնառության արդյունքները սահմանված են բոլոր ծրագրերի համար: Համալսարանը որդեգրել է ուսանողակենտրոն ուսումնառության մոտեցումը, սակայն անցումը դրան դեռևս ավարտուն չէ: Դետր է նաև նշել, որ ուսումնառողների գնահատումն օբյեկտիվ է, իսկ գնահատման շափանիշերը՝ թափանցիկ, այնուամենայնիվ, գնահատման օբյեկտիվությունը կարող է բարելավվել:**

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Փորձագիտական խումբը շափանիշ 3-ր գնահատում է բավարար:**

### **ԽՈՂՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

#### **Խորհուրդ է սրվում՝**

- մշակել դասավանդման և ուսումնառության մեթոդներն ուսումնառության վերջնարդյունքներին համապատասխանեցնելու հստակ քաղաքականություն, որը հիմնված կլինի անհրաժեշտ տեղեկատվության, (միջազգային) լավագույն փորձի տարածման և դասախոսների և ուսանողների լայն ներգրավման վրա,
- ներդնել հարցումների իրականացման համակարգ՝ նոր կրթական մոտեցումները քննադատորեն գնահատելու հնարավորություն ստեղծելու համար,
- խթանել միջառարկայական կրթական ծրագրերի մշակումը:

### **ՉԱՓԱՆԻՇ 4: ՈՒՍԱՆՈՂՆԵՐ**

**ՄՈՒՀ-Ն ՈՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՏՐԱՄԱՋՐՈՒՄ Է ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՉԱԿցՈՒԹՅՈՒՆ՝ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆԱՊԱՏԱԿՈՎ:**

### **ՓԱՍՏԵՐ**

- 4.1. Համալսարանը տեղացի և արտասահմանցի ուսանողների ընտրության և ընդունելության համապատասխան մեխանիզմներ և կանոնակարգեր ունի: Համակարգի գործառնության մասին վկայում է ԵՊՀ դիմորդների թվի կայուն աճը (Վերջին 4 տարիների ընթացքում ավելի քան 20%): Տեղացի ուսանողների համար ընդունելության շափանիշները սահմանված են ըստ օրենքի: Արտասահմանցի ուսանողների ընդունելությունն իրականացվում է կառավարության կողմից հաստատված կանոնակարգերով: Հետաքրքիր փաստ է հեռակա ուսանողների թվի զգալի աճը: ԵՊՀ ընդունելության և դիմորդների նախապատրաստման ուղղությամբ համալսարանի

- 4.2.** Համալսարանում կիրառվում են ուսանողների կրթական կարիքների բացահայտման մի քանի մեխանիզմներ: Վերագրծարկվել է կուրատորների ինստիտուտը: Կուրատորները բացահայտում են իրենց ամրագրված ուսանողների կրթական կարիքները և հետևում նրանց ուսումնական առաջընթացին, օգնում հաղթահարել ուսման ընթացքում ծագած դժվարությունները: Կուրատորների աշխատանքը հաշվարկվում է նրանց բեռնվածության մեջ և վճարվում համապատասխան չափով: Ինչպես նշված է ինքնավերլուծության գեկույցում, ուսանողների բավարարվածությունը կուրատորների աշխատանքից բավականին ցածր է: Այնուամենայնիվ, փորձագիտական խմբի անդամների հետ հանդիպումների ժամանակ ուսանողները նշեցին, որ հիմնական դժվարությունները լուծված են և անհրաժեշտություն են տեսնում կուրատորների գոյության մասին ավելի տեղեկացված լինելու: Բացի կուրատորներից, ուսանողները աջակցություն են ստանում նաև ուսանողական խորհրդից և ուսանողական գիտական ընկերությունից: 2006թ.-ին ստեղծվել է ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը, որը կարևոր քայլ էր ուսանողներին աշխատաշուկա մտնելու վերաբերյալ ուղղորդման և նախապատրաստման տեսանկյունից: Ներկայումս ուսանողների կարիքների բացահայտման և մշտադիտարման նպատակով ավելի համակարգված կերպով փորձնական ծրագիր է իրականացվում:
- 4.3.** ԵՊՀ-ն ուսանողների ուսումնառությանն աջակցելու նպատակով ստեղծում լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ: ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կողմից պարբերաբար կազմակերպվում են տարբեր սեմինարներ, դասընթացներ, խորհրդատվական հանդիպումներ կամ անհատական խորհրդատվություններ՝ ուղղված աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը: Ուսանողների կրթական կարիքների վերհանմանը գուգակում է ընդլայնել և զարգացնել նրանց առաջարկվող լրացուցիչ պարապմունքների և խորհրդատվության տեսականին: Քանի որ ԵՊՀ-ն մտադիր է ընդլայնել անհատական դասընթացների հնարավորությունները, ուս. պլանով սահմանված դասընթացի և արտալսարանային գործունեության միջև սահմանը կարող է հետզհետեւ անհետանալ: Ուսանողների աջակցումը և խորհրդատվությունը վարչական անձնակազմի մակարդակով հիմնականում իրականացվում է դեկանների կողմից: Ուսանողների տեղափոխությունները, վերականգնումները և նմանատիպ այլ գործընթացներ կարգավորվում են մի շարք փաստաթղթերով:
- 4.4.** Ուսանողները տարբեր հարցերով դիմում են դեկաններին, կամ իրենց կուրատորներին գրավոր կամ բանավոր դիմումների տեսքով: Բացի այդ, ուսանողները կարող են դիմել ուսանողական խորհրդում կամ ուսանողնական գիտական ընկերությունում իրենց ներկայացուցին, ովքեր կոչված են տարբեր հարցեր բարձրացնելու բուհ-ի կառավարման տարբեր մարմիններում կամ ռեկտորատում: Մի շարք հարցեր, ինչպես օրինակ՝ ուսանողական վարձավճարների գեղչերը, ուսանողների տեղափոխությունները, վերականգնումները և այլ կրթական հարցեր, որոշվում են համալսարանական մակարդակով: Ուսանողների բողոքները (կամ բարելավմանը միտված առաջարկությունները), ներկայումս լուծվում են ոչ գրավոր կերպով, տարբեր կողմերի ներկայությամբ՝ սեփական նախաձեռնության հիման վրա:
- 4.5.** Կարիերայի կենտրոնն ակտիվորեն իրականացնում է իր առաքելությունը: Կենտրոնը մի շարք գործընթացներ է իրականացնում, որոնցից են սեմինարների, վերապատարատումների,

խորհրդատվությունների, կամավորական աշխատանքների կազմակերպումը, տարբեր կազմակերպությունների հետ պայմանագրերի ստորագրումը, վեր-կայքերի մշակումը, պրակտիկաների կազմակերպումը և կլոր-սեղան քննարկումները: Ուսանողներն ընդհանուր առմամբ բավարարված են Կարիերայի կենտրոնի ծառայություններից: Համալսարանը փորձում է ավելի ամուր կապեր հաստատել աշխատաշուկայի հետ, որպեսզի արտաքին շահակիցների պահանջներին համապատասխան մասնագետներ պատրաստի: Այս առումով, Սինոպսիս-Հայաստանի հետ համագործակցությունը լավ փորձ կարող է հանդիսանալ: Այնուամենայնիվ, ֆորմալ մոտեցում դեռևս չկա՝ չնայած ՄՈՒՀ-ը խրախուսում է պրակտիկաների իրականացումը և որպես պարտադիր մաս ներկայացված է կրթական ծրագրերում:

**4.6. ԵՊՀ-ն տարբեր միջոցներով խրախուսում է ուսանողների ներգրավվածությունը հետազոտական գործընթացներում՝**

- ուսանողական գիտական ընկերության միջոցով, որը նպաստում է ուսանողների գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը,
- բակալավրի, մագիստրոսի և ասափիրանտուրայի կրթական ծրագրերի շրջանակներում ևս խրախուսվում է ուսանողների ներգրավվածությունը տարբեր գիտահետազոտական աշխատանքներում,
- Ուսանողական գիտական ընկերությունը կազմակերպել է 46 հանրային և 39 ֆակուլտետային մասշտաբի գիտաժողով:

Համալսարանը հատուկ բյուջե է նախատեսել այդ գործառույթների իրականացման համար: Սկսած բակալավրի կրթական ծրագրից (հիմնական շեշտադրում կատարելով գիտելիքի և հմտության վրա), հետազոտական գործունեությունն ավելանում է՝ մագիստրատուրայում ներառելով ավելի մեծ ծավալ, իսկ ասպիրանտուրայում հետազոտական գործունեությունը հասնում է մինչև 100%-ի: Հետազոտության թեմաներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն բխում են անձնակազմի հետազոտական ծրագրերից: Չնայած ՈՒԳԸ-ն որոշակի ազատություն է տալիս հետազոտության թեմայի հարցում՝ այնուամենայնիվ, ուսանողները դեռ կարող են օգուտ քաղել դեկավարի մասնագիտական փորձառությունից: Որոշ ֆակուլտետներ, ինչպես օրինակ՝ բնական գիտությունների ֆակուլտետները, ավելի մեծ հնարավորություններ են տրամադրում ուսանողներին, քան մյուսները: Ուսանողների ներգրավվածությունը հետազոտական գործունեության մեջ կախված է վերջինների անհատական նախաձեռնությունից և տաղանդից: Դժբախտաբար հետազոտական պաշտոնները և հնարավորությունները ընդհանուր առմամբ բավարար չեն, ինչը սահմանափակում է ուսանողների կրթական զարգացման հնարավորությունները:

**4.7. Ուսանողների իրավունքների պաշտպանությամբ գրադրում են մի շարք մարմիններ: ԵՊՀ ուսանողների իրավունքների պաշտպանությունը կանոնակարգվում է ՀՀ օրենսդրությամբ և ներքին այլ ակտերով: Ուսանողների իրավունքների պաշտպանությանն ուղղված ծրագրերը կարելի է բաժանել 3 հիմնական խմբի՝ 1) կանխարգելում և տեղեկացում, 2) ոչ անհատականացված գործունեություն կամ ինստիտուցիոնալ մակարդակով մեխանիզմների մշակում, 3) անհատական գործունեություն: Ուսանողների խնդիրները քննարկվում են խորհուրդներում և հանձնաժողովներում: Ռազմավարական պլանում շեշտադրվում է ուսանողների դերի մեծացումը բուհի կառավարման գործընթացներում:**

**4.8. Ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակ ծառայությունների գնահատման և որակի ապահովման համար իրականացվում են «Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցում» և «ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության**

վերաբերյալ շրջանավարտների հարցում» (այսուհետև՝ շրջանավարտների հարցում): Այս հարցախույզները որակի վերահսկման հիմքն են հանդիսանում: Հարցումների արդյունքները քննարկվում են նաև ֆակուլտետային խորհուրդներում: Հարցումների արդյունքները համառոտ կերպով ներկայացվում են գիտխորհրդում:

## ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ ընդունելության չափանիշերը սահմանված են օրենքով, հաշվի չեն առնվում դիմորդների մոտիվացիան կամ կարողությունների տարբերությունները: Սա կարող է փոխկապակված լինել ուսումնառությանն առաջին տարում ուսումնառության վերջնարդյունքների ոչ լիարժեք ձեռքբերման հետ: Ուսանողների առաջադիմության ցուցանիշը բարձրացնելու համար համալսարանը կշահի, եթե կարողանա մեծացնել իր ինքնավարությունը ընդունելության չափանիշերի սահմանման գործում՝ դրանցում ներառելով դիմորդների հմտություններն ու մոտիվացիան:

Ուսանողակենտրոն ուսումնառությունը ենթադրում է նաև համապատասխան աջակցության տրամադրում առանձնահատուկ կարիքներ ունեցող, հաշմանդամ կամ սոցիալ-տնտեսական խնդիրների պատճառով դժվարություններ ունեցող ուսանողներին: Մինչ օրս ֆակուլտետների կողմից ցուցաբերվող աջակցությունը տրամադրվում է անհատական ձևով, օրինակ՝ փոխտեկանների կամ կուրատորների կողմից: Կարծես ԵՊՀ ընդհանուր քաղաքականությունը բացակայում է: Որոշ չափով սա պայմանավորված է ֆինանսական սուլ միջոցներով, ինչի հետևանքով ներկայումս, օրինակ, անհնար է համալսարանի բոլոր մասնաշենքերը հարմարեցնել հաշմանդամություն ունեցող ուսանողների կարիքներին: Ակնհայտորեն այս խնդիրը մշտական ուշադրության անհրաժեշտություն ունի: Առանձնահատուկ կարիքներ ունեցող և օտարերկրյա ուսանողներին տրվող աջակցությունը հետագա պաշտոնականացման կարիք ունի: Հատուկ ուշադրություն է պահանջում նրանց ուսումնական առաջադիմության ապահովումը: Անհրաժեշտ է նաև խրախուսել և պաշտոնականացնել այդ ուսանողների ակտիվ ներգրավումը համալսարանի կառավարման տարբեր մարմիններում:

Թվում է՝ ուսանողները բավարարված են ընդունելության և բողոքարկման ընթացակարգերի արդյունավետությունից, այնուամենայնիվ, օգտակար կլինի գործող ընթացակարգերի պատշաճ վերլուծությունը:

Կարիերայի և շրջանավարտների կենտրոնի ստեղծումը կարևոր քայլ է՝ ուսանողներին աշխատաշուկա մուտք գործելուն նախապատրաստելու տեսանկյունից: Քանի որ պրակտիկաների կազմակերպման ֆորմալ կանոնակարգերի վերաբերյալ չկա բավարար տեղեկատվություն, պարզ չէ, թե համալսարանն ինչպես է ապահովում դրանց որակը, և թե ինչպես է գնահատում՝ որքանով են վերջիններս նպաստում ակնկալվող որակավորումների ձեռքբերմանը:

Փորձագիտական խումբը ցանկանում է մատնանշել, որ ինքնազնահատումը կարող է ծառայել որպես անձնական առաջիսադացման բարելավման գործիք և՝ դասախոսների, և՝ ուսանողների համար: Ակնհայտորեն ինքնազնահատումը մոտիվացնում է ուսանողներին և դասախոսներին, ինչպես նաև խթանում ինստիտուցիոնալ մակարդակում որակի մշակույթի

ձևավորմանը: Ինքնազնահատումը կարող է հանդիսանալ, ընդհանուր առմամբ, ուսանողների առաջադիմության և անձնակազմի կատարողականի գնահատման համակարգի գործիք:

**Հաշվի առնելով վերոնշյալ փաստարկը՝** փորձագիտական խումբը գտնում է, որ ուսանողների ներգրավվածությունը համալսարանի կառավարման գործընթացներում և խորհուրդներում լավ է համակարգված: Ավելին, ուսանողները հնարավորություն ունեն ներգրավվելու հետազոտական աշխատանքներում: Այնուամենայնիվ նրանց ներգրավվածության աստիճանը կախված է իրենց իսկ անձնական նախաձեռնությունից և ունակություններից:

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Փորձագիտական խումբը չափանիշ 4-ը գնահատում է դրական**

### **ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

#### **Խորհուրդ է տրվում՝**

- խրախուսել և պաշտոնականացնել առանձնահատուկ կարիքներ ունեցող և հաշմանդամ ուսանողների ներգրավվածությունը համալսարանի կառավարման մարմիններում,
- գնահատել ուսանողների կարիքների բացահայտման մեխանիզմների արդյունավետությունը,
- գնահատել՝ որքանով են լրացուցիչ դասընթացներն ու պրակտիկաները նպաստում ակնկալվող որակավորումների ձևավորմանը,
- մշակել հստակ պաշտոնական ընթացակարգ և ժամանակացույց, ինչը կօգնի ուսանողներին դիմել վարչական անձնակազմին իրենց խնդիրներով,
- փոխկապակցել ուսանողների և դասախոսների հետազոտական գործունեությունը և գնահատել հետազոտական գործունեության արդյունավետությունը,
- գնահատել՝ որքանով են պրակտիկաները նպաստում անհրաժեշտ որակավորումների ձեռքբերմանը,
- ուսումնասիրել ուսանողների իրավունքների պաշտպանության մեխանիզմների արդյունավետությունը և վերլուծել վերջիններիս ազդեցությունը:

## **ՉԱՓԱՆԻՇ V: ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԾԱՆԴԱԿ ԿԱԶՄ**

**ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:**

### **ՓԱՍՏԵՐ**

**5.1; 5.2.** -ԵՊՀ-ում գործում են մի շարք կանոնակարգեր և ընթացակարգեր, որոնք կոչված են նպաստելու անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և

ուսումնաօժանդակ կազմի ընտրությանը և պահպանմանը: Անձնակազմի համալրումը կարգավորվում է ԵՊՀ գիտխորհրդի կողմից լրամշակված և հաստատված «ԵՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման» կարգով (28.06.2012 թ.): Վերջինս սահմանում է դասախոսական կազմի մրցութային ընտրության, պաշտոնների տեղակալման ընթացակարգն ու պայմանները, տարբեր տարակարգերի (պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս) որակական և քանակական բնութագրերն, ինչպես նաև տրամադրում է դասախոսների հետ կնքվող պայմանագրերի ձևուն համակարգը, որոնք բացակայում են մինչ այդ: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ չնայած ըստ տարակարգերի դասախոսական կազմի ընտրության՝ պաշտոնների տեղակալման և առաջընթացի պահովման հաջողված փորձի, ԵՊՀ-ում դեռևս չկան դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ՝ ըստ կրթական ծրագրերի: Ինչպես նշված է ինքնավերլուծության գեկույցում, արդյունավետ չեն գործում ուսումնական գործունեությանը, վարչարարությանն ու հասարակական գործունեությանը: Վերջինս խթանում է նաև լավագույն անձնակազմի ընտրությունը:

Ուսանողների կողմից դասախոսական կազմի գնահատման մի շարք մեխանիզմներ, որոնցից առավել կարևորվում են դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները և դասալսումները: Դասախոսական անձնակազմի գնահատումը ներառում է որակավորումների լայն շրջանակ, որն առնչվում է կրթությանը, հետազոտական գործունեությանը, վարչարարությանն ու հասարակական գործունեությանը: Վերջինս խթանում է նաև լավագույն անձնակազմի ընտրությունը:

Ուսանողների կողմից դասախոսական կազմի գնահատման մեխանիզմի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ հարցման մեթոդաբանությունը, ընթացակարգը և չափանիշերը (հարցաշարը) պարբերաբար լրամշակվել և կատարելազործվել են: Ինչպես փորձագիտական խումբը նկատեց այցի ընթացքում, ուսանողների բավարարվածությունը դասախոսական կազմից բավականին բարձր է: Դասախոսները մոտիվացված են, նվիրված իրենց գործին և ցուցաբերում են գործընկերային մոտեցում: Այնուամենայնիվ, ինչպես նշված էր ինքնավերլուծության գեկույցում, ուսանողական հարցումների արդյունքներն ավելի արդյունավետ կարելի է օգտագործել՝ անհատական մակարդակում դասախոսական կազմի մասնագիտական հմտությունները, դասավանդման որակը բարելավելու նապատակով:

5.4. Բարձրորակ դասախոսական կազմի ներգրավումը և նրան շարունակական կատարելազործման հնարավորությունների տրամադրումը ԵՊՀ որակյալ կադրային ներուժի ձևավորման կարևորագույն սկզբունքն է (ԵՊՀ ՌԾ, ուսամավարական նպատակ IV): Այդ նպատակով ԵՊՀ-ում ստեղծվել և գործում են դասախոսների որակավորման բարձրացման տարբեր ծրագրեր: ԵՊՀ-ում իրականացվում է դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական արդիական ծրագիր՝ հիմնված կրեդիտային համակարգի վրա, որը հնարավորություն է տալիս կատարելազործելու պրոֆեսորադասախոսական կազմը՝ որակի հավաստման միջազգային չափանիշներին համապատասխան, ապահովելու դասախոսների ակադեմիական շարժունությունը և ստեղծելու որակի հավաստման ներքին մեխանիզմներ:

Մասնագիտական զարգացմանը միտված վերապատրաստումներին մասնակցությունը պարտադիր է: Դասախոսների վերապատրաստումների համար կրեդիտային համակարգի ներդրումը զգալի ձեռքբերում է: Վերջինս կարևոր գործիք է դասախոսական կազմի որակի ապահովման տեսանկյունից:

Համալսարանը քաջատեղյակ է բարձրորակ դասախոսական կազմի համալրման և պահպանման խնդիրներին: Այդ իսկ պատճառով համալսարանում գործում է դասախոսների տարբերակված

հավելավճարների համակարգ, որը հիմնվում է վերջիններիս աշխատանքային ծանրաբեռնվածության և մրցունակության ցուցանիշների վրա:

Համալսարանը ներկայացրել է այն մեխանիզմները, որոնցով իրականացվել է գործընթացը, սակայն ուսումնասիրված չէ վերջիններիս արդյունավետությունը, և թե որքանով են դրանք նպաստում դասավանդմանը և ուսումնառությանը: Հստակ չէ՝ որքանով են մասնագիտական զարգացման դասընթացները կապված կրթական ծրագրերի որակավորումների հետ:

- 5.7. Վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի հաստիքացուցակի ձևավորումը, աշխատողների պարտականությունների սահմանումն ըստ պաշտոնների, ընտրությունը, առաջխաղացումը և ատեսավորումը կարգավորվում են ԵՊՀ կանոնադրությամբ և առանձին ստորաբաժանումների կանոնադրություններով: ԵՊՀ-ն ներկայումս ունի շուրջ 330 վարչական աշխատող: ԵՊՀ-ում վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի որակն ապահովվում է մի շարք մեխանիզմներով, դրանցից են՝ վերապատրաստումը, ատեսավորումը և ստաժավորումը: Այնուամենայնիվ, համալսարանը գիտակցում է, որ բացակայում են վարչական և ուսումնաօժանդակ կազմի ատեսավորման մասնագիտական չափանիշերը և կատարելագործման մեխանիզմները:

## ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ-ում գործում են մի շարք կանոնակարգեր և ընթացակարգեր, որոնք կոչված են նպաստելու անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրությանը և պահպանմանը:

Հարկ է նշել, որ չնայած ըստ տարակարգերի դասախոսական կազմի ընտրության, պաշտոնների տեղակալման և առաջընթացի ապահովման հաջողված փորձի՝ ԵՊՀ-ում դեռևս չկան դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջները՝ ըստ կրթական ծրագրերի:

ԵՊՀ-ում առկա են դասախոսական կազմի արդյունավետության գնահատման մեխանիզմներ: Համալսարանում գործող գնահատման ձևերն են դասախոսումները և ուսանողների շրջանում անցկացվող հարցումները, որոնք նպաստում են խնդիրների լուծմանը: Այդուհանդեռձ, առկա գործիքները բավարար չեն՝ հավաստելու ցանկալի նպատակի ձեռքբերումը:

Համալսարանը միջոցներ է ձեռնարկել՝ դասախոսական կազմի կատարելագործման համար:

Այս փաստը, որ բարելավմանը միտված չափումները չեն իրականացվում ներքին և արտաքին գնահատման պահանջներին համապատասխան, դժվարացնում է բարելավմանը միտված գործողությունների արդյունավետության գնահատումը: Տրամադրված տեղեկատվությունը բավարար հիմքեր է տալիս պնդելու, որ պլանավորման, տվյալների հավաքման, որոշումների կայացման գործընթացների բարելավումը հստակ չէ:

Հաշվի առնելով վերոնշյալ փաստարկը՝ փորձագիտական խումբն այս չափանիշը գնահատում է դրական, քանի որ հանդիպեց չափազանց նվիրված և մոտիվացված անձնակազմի: Խումբը տեսավ նաև, որ նրանք միմյանց հետ սերտ համագործակցում են, իսկ խնդիրները

քննարկում կոլեգիալ ձևով: Սա էական է, քանի որ անձնակազմի որակից է կախված կրթության որակը: Այնուամենայնիվ, այլ համալսարաններից ավելի շատ մասնագետներ պետք է ներգրավվել, ինչպես նաև անհրաժեշտ է ապահովել դասախոսական կազմի մասնագիտական զարգացումը: Փորձագիտական խումբը գովելի է համարում դասախոսական կազմի գնահատման համակարգը, որը ներառում է որակավորումների լայն շրջանակ, այն է՝ կրթություն, հետազոտական գործունեություն, վարչարարություն ու հասարակական գործունեություն:

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Փորձագիտական խումբը չափանիշ 5-ը գնահատում է բավարար:**

### **ԽՈՐՀՄԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

#### **Խորհուրդ է տրվում՝**

- սահմանել կրթական ծրագրի պահանջներին համապատասխան դասախոսական կազմին ներկայացվող մասնագիտական հստակ որակներ,
- ներդնել երիտասարդ դասախոսներին խորհրդատվության ու փոխօգնության համակարգ,
- կիրառել ուսանողական հարցման արդյունքները՝ դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրերն ուղղորդելու և անհատականացնելու նպատակով,
- բարելավել դասախոսական կազմի անզերեն լեզվի իմացությունը,
- փոխկապակցել մասնագիտական զարգացման դասընթացները կրթական ծրագրերի որակավորումների հետ,
- մշակել մասնագիտական չափորոշիչներ և բարելավման մեխանիզմներ՝ վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի ատեստավորման համար:

## **ՉԱՓԱՆԻՇ VI: ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ**

**ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:**

### **ՓԱՍՏԵՐ**

- 6.1.** Համալսարանն ունի հետազոտական համալսարան դառնալու հստակ սահմանված հավակնություն, որը միտված է զարգացմանը, հետազոտական գործընթացում լայն ներգրավվածության ապահովմանը, համագործակցային հետազոտության խթանմանը, հետազոտության միջազգայնացմանը և ելքոպական չափանիշներին համապատասխան մագիստրոսական ծրագրերի վերանայմանը: Հետազոտության ոլորտում երկարաժամկետ ուսումնավարությունն արտահայտող ԵՊՀ-ի ներկայիս հետաքրքրություններն ու հավակնությունները միտվածն են հետազոտության զարգացմանն ու հետազա բարելավմանը, որն իրականացվում է հիմնական հետազոտական գործունեության և մասնագիտական ամբիոնների ու գիտահետազոտական կենտրոնների (կազմակերպություններ, կենտրոններ, լաբորատորիաներ) փոխկապակցման միջոցով: Այս կառույցները մոբիլիզացնելու և ֆինանսավորելու ընտրության ուղմավարությունն, որը միտված է համալսարանի հետազոտական հավակնություններին հասնելուն, դեռևս հստակ չէ:

**6.2.** Ներկայումս, յուրաքանչյուր ստորաբաժանում (ֆակուլտետ, ամբիոն, լաբորատորիա) մշակում է իր հետազոտական ծրագիրը և սահմանում հետազոտության իրականացման և հետազոտական խմբերի ձևավորման պայմանները: Ստորաբաժանումների կողմից պլանավորված հետազոտության հիման վրա համալսարանը ձևավորում է իր միջնաժամկետ ծրագիրը և բաշխում է 3-5 տարվա հետազոտական պլանում: Ներքևից վերև մոտեցումը քիչ հնարավորություններ է ընձեռում համալսարանի տեսլականի և երկարաժամկետ ռազմավարական պլանի մշակման համար:

Հետազոտական գործունեության արդյունքի և որակի գնահատման գործիքները, ինչպիսիք են՝ փորձագիտական գնահատում անցած հրապարակումները (տեղական և միջազգային մակարդակներում), ազդեցության գործուները, տեղական և միջազգային դրամաշնորհների քանակը, ասպիրանտների թիվը և այլն, դեռևս մշակման փուլում են:

ԵՊՀ հետազոտական գործունեությունն ավանդաբար ակտիվ է բնագիտական ոլորտում, որը ֆինանսավորվում է ինչպես համալսարանի, այնպես էլ միջազգային դրամաշնորհների միջոցներով: Այնուամենայնիվ, ֆինանսական ռեսուրսները սույ են: Ցածր աշխատավարձը երիտասարդ հետազոտող ուղեղների արտահոսքի պատճառ է հանդիսանում:

**6.3.** Ինչպես նշված է ինքնավերլուծության գեկուցում՝ ԵՊՀ հետազոտական աշխատանքների ու նորամուծությունների քաղաքականությունն ու ընթացակարգերը բխում են ԵՊՀ Կանոնադրությունից, գիտության բազային ու թեմատիկ (դրամաշնորհային) ֆինանսավորման միջոցների բաշխման և տնօրինման պետական կարգերից և ամրագրված են ԵՊՀ կանոնակարգերում և ծրագրային փաստաթղթերում: Դրանք միտքած են պահպանելու և զարգացնելու ԵՊՀ-ի ավանդաբար ուժեղ գիտական ուղղություններն ու դպրոցներն, արձագանքելու գիտության զարգացման միջազգային միտումներին՝ նոր գիտական լաբորատորիաների ու կենտրոնների ստեղծման ձանապարհով:

ԵՊՀ հետազոտական բյուջեն ձևավորվում է պետական բազային, պետական թեմատիկ (դրամաշնորհային) և արտաբյուջետային միջոցներից (համագործակցության համաձայնագրեր, միջազգային դրամաշնորհներ և այլն):

**6.4.** ԵՊՀ-ն փորձում է ընդլայնել գիտական կենտրոնների, միջազգային գործընկերների հետ համագործակցությանը շրջանակը, մասնակցել միջազգային համաժողովներին, մեծացնել միջազգային բարձր վարկանիշ ունեցող մասնագիտական ամսագրերում և հանդեսներում գիտական աշխատությունների քանակը և ներդնել համատեղ ծրագրեր՝ ասպիրանտների և մագիստրոսների շարժունությունն ապահովելու նպատակով: Վերոնշյալ գործունեության խթանումն իրականացվում է միջազգային փորձագետների հետ՝ հետազոտական գործունեության միջազգայնացման վերաբերյալ հանդիպումների և սեմինարների անցկացման միջոցով:

ԵՊՀ-ում հետազոտական գործունեության միջազգայնացումը յուրաքանչյուր գիտակրթական ստորաբաժանման (ֆակուլտետ, ամբիոն, ինստիտուտ, կենտրոն, հետազոտական լաբորատորիա, թեմատիկ հետազոտական խումբ) գործունեության գերակայությունն է, ինչը պայմանավորված է գիտության միջազգային բնույթով և հետազոտությունների ֆինանսավորման միջազգային (արտասահմանյան) աղբյուրների առկայությամբ և հասանելիությամբ:

Բնական և ճշգրիտ գիտությունների ոլորտում հետազոտության միջազգայնացումը շատ է կարևորվում, այնուամենայնիվ, նույնը չի կարելի ասել հասարակագիտական և հումանիտար գիտությունների վերաբերյալ: Նման հակասության պատճառները վերլուծված չեն, ինչպես նաև իրավիճակի բարելավման մասին վկայող փաստեր չկան: Ավելին, ինքնավերլուծության բացթողումների մասում ևս այս փաստը ներկայացված չէ որպես հիմնական մարտահրավեր:

- 6.5.** Հետազոտությունն ուսումնառության գործընթացի հետ փոխկապակցելը դասավանդման բարելավման ուղղություններից մեկն է համարվում: Համալսարանը խրախուսում է ուսանողների ներգրավվածությունը լաբորատորիաներում կամ գործնական աշխատանքներում (ասպիրանտներ՝ հետազոտական ծրագրերում, բակալավր և մասգիստրոսներ՝ հետազոտական թեմաներում): Այնուամենայնիվ, ուսանողների ներգրավվածությունն արտալսարանային հետազոտական աշխատանքներում հիմնականում կախված է ուսանողների անձնական մոտիվացիայից և հավակնություններից: Ընդհանուր առմամբ, հետազոտությունն ուսումնական պլանի անբաժան մասը չէ, բացառություն են կազմում բնագիտական և ճշգրիտ գիտությունների ֆակուլտետները: Փաստացի համալսարանը չունի գիտահետազոտական գործունեությունը խթանող քաղաքականություն, և հետազոտության վրա հիմնված գիտական մտածողության զարգացումը կրթական ծրագրի մաս չի կազմում: Այդ իսկ պատճառով հնարավոր չէ վերլուծել գիտության վրա հիմնված ծրագրերի ազդեցությունն ուսանողների ձեռքբերած վերջնարդյունքների վրա: Բուհը, կարծես, ամբողջովին չի ընդունում, որ հետազոտությունը կրթության մեջ հիմնական ուսումնառության մեթոդն է:

## ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Համալսարանի հետազոտական ուսումնավարությունը հստակ է այն առումով, որ միտված է զարգացմանը, հետազոտական գործընթացում լայն ներգրավվածության ապահովմանը, համագործակցային հետազոտության խթանմանը, հետազոտության միջազգայնացմանը և եվրոպական չափանիշերին համապատասխան մագիստրոսական ծրագրերի վերանայմանը: Այնուամենայնիվ, համալսարանը պետք է հետազայում մշակի հետազոտության ուսումնավարություն՝ սահմանելով հստակ նպատակներ, վերջիններս փոխակապակցելով միմյանց և հատկացնելով ֆինանսական ռեսուրսներ:

Առկա են հետազոտական գործունեության միջնաժամկետ և երկարաժամկետ պլաններ, սակայն նկարագրված գործողությունները բավարար տեղեկատվություն չեն տրամադրում՝ հասկանալու, թե ինչպես է պլանավորումն իրականացվում, և իրականացման ու արդյունքների որակի գնահատման ինչ գործիքներ կան:

Բնական և ճշգրիտ գիտությունների ոլորտում հետազոտության միջազգայանցումը շատ է կարևորվում, այնուամենայնիվ, նույնը չի կարելի ասել հասարակագիտական և հումանիտար գիտությունների վերաբերյալ: Նման հակասության պատճառները վերլուծված չեն, ինչպես նաև իրավիճակի բարեկալման մասին վկայող փաստեր չկան: Ավելին, ինքնավերլուծության բացթողումների մասում ևս այս փաստը ներկայացված չէ որպես հիմնական մարտահրավեր:

Համալսարանի որոշ գործընթացներ նպատակառուղղված են կրթությունն ու հետազոտությունը միմյանց կապակցելուն: Այնուամենայնիվ, այդ գործընթացներն իրականացնելու համար կառուցվածքային հենք դեռևս չկա:

Երջանավարտների և հետազոտողների /հետբուհական կրթությամբ ուսումնառողների/ ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում հնարավոր է, եթե կա անձնական մոտիվացիա և գիտական հետաքրքրվածություն, սակայն համալսարանը կարծես չունի համապարփակ քաղաքականություն, որը կներառի հետազոտությունը և գիտական

մտածողությունը կրթական ծրագրերի շրջանակում: Ավելին, բացակայում է այդ մոտեցումների ազդեցության համակարգված գնահատումը և հստակ չէ՝ վերջիններս ինչ ազդեցություն ունեն ուսումնառության վրա:

**Հաշվի առնելով վերոնշյալ փաստարկը՝** փորձագիտական խումբը եզրակացնում է, որ հետազոտական գործունեությունը շատ սահմանափակ է և՝ վերջնարդյունքի, և՝ կրթական ծրագրերի մշակման մեջ դասախոսական կազմի ու ուսանողների ներգրավվածության աստիճանի տեսանկյունից: Հստակ է, որ համալսարանն ունի իր ուրույն դերը հետազոտության գարգացման և նորարարության մեջ: Այնուամենայնիվ, ԵՊՀ-ս ռազմավարական պլանից բխող միասնական հետազոտության ռազմավարության կարիք ունի (տե՛ս չափանիշ 1-ի եզրակացությունը): Տեղական մակարդակով գիտական արդյունքները բարձր ցուցանիշ ունեն, սակայն հետազոտության որակը բարելավման կարիք ունի միջազգային մակարդակում մրցունակ լինելու համար: Փորձագիտական խումբը հավանության է արժանացնում համալսարանի հետազոտական հավակնությունները, սակայն գտնում է, որ այս պահի դրությամբ տվյալ չափանիշը չի բավարարում անհրաժեշտ պահանջներին:

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Փորձագիտական խումբը չափանիշ 6-ը գնահատում է անբավարար**

### **ԽՈՐՀՐԴԱՎՈՒԹՅՈՒՆ**

#### **Խորհուրդ է սրվում՝**

- վերանայել և մասնավորեցնել համալսարանի հետազոտության ռազմավարությունը,
- ընդլայնել հետազոտական գործունեությունը՝ ջանքերը կենտրոնացնելով հիմնականում գերազանցության կենտրոնների սահմանափակ քանակի վրա՝ ներառելով Հայաստանի և վերջինիս սահմաններից դուրս գտնվող այլ համալսարանների և կրթական կենտրոնների ներդրումները: Այս կենտրոնները կարող են խթանել նորարարությունը և հանդես գալ որպես հիմնաքար հետազոյում դասավանդման և ուսումնառության մեթոդների մշակման գործընթացում: Այս մոտեցումը հնարավոր է ներդնել բազմառարկայական ծրագրերի միջոցով, իսկ փորձագիտական խումը քաջալերում է համալսարանին որդեգրել կրթական ծրագրի մշակման այս առավել ժամանակակից մոտեցումը՝ ավելի շատ հորիզոնական ինտեգրում ապահովելով:
- որդեգրել քաղաքականություն, որը նպատակառուղյան կիրառությունը կապահպանությունը համար արտաքին աղբյուրներից եկամուտների մեծացմանը,
- մեծացնել միջազգային բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում հրապարակումների քանակն ու բարելավել որակը՝ համալսարանի տեսանելիությունն ապահովելու նպատակով,
- մշակել հետազոտության ռազմավարության իրականացման և որակի վերահսկման գործիքներ,
- մշակել քաղաքականություն, որով կհավաստի, որ հետազոտությունը դարձել է ուսումնառության էական մեթոդ ակադեմիական կրթության մեջ: Համապատասխան կրթական մակարդակներում ուսանողների վերապատրաստումը հետազոտության և

գիտական մտածողության ուղղությամբ պետք է դառնա բոլոր կրթական ծրագրերի բաղկացուցիչ մաս:

## ՉԱՓԱՆԻՇ VII: ԵՆԹԱԿԱՌՈՒԹՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

### ՓԱՍՏԵՐ

- 7.1. Թվում է՝ համալսարանը հոգում է, որ ապահովի կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան ռեսուրսներ: Միջին հաշվով համալսարանի շենքը (լսարաններ, լաբորատորիաներ) բավականին լավ վիճակում է կահավորման և տեխնիկական ապահովվածության տեսանկյունից: Սահմանափակ ֆինանսական ռեսուրսների առկայության պարագայում բուհը կարողացել է կառուցել համապատասխան գրադարան և SS ռեսուրսներ: Ավելին, համալսարանի բյուջեով ամեն տարի զգալի գումարներ են հատկացվում մասնաշենքերի, ուսումնաարտադրական բազաների ու այլ շինությունների վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար: Սակայն, լաբորատոր սարքավորումները և էլեկտրոնային դասավանդման միջավայրը նորացման կարիք ունեն: Ինտերակտիվ դասավանդման համար նախատեսված լսարանները քիչ են: Առկա են ռեսուրսների գնահատման մեխանիզմներ: Գնահատման արդյունքների հիման վրա համալսարանը ֆակուլտետներում վերանայումներ է իրականացնում: Դասախոսներն ու ուսանողները բավարարված են ուսումնառության ռեսուրսներից և տեխնիկական սպասարկումից:
- 7.2. ԵՊՀ-ում ֆինանսական հոսքերի կառավարումը և վերահսկողությունն իրականացնելու նպատակով կազմվում է բյուջետային մուտքերի և ելքերի տարեկան նախահաշիվ, իսկ ֆինանսական տարվա ավարտից հետո փաստացի տվյալների վերլուծությունների հիման վրա ներկայացվում է տարեկան բյուջեի կատարողականը: ԵՊՀ բյուջեի հիմնական եկամտային հոդվածներն ունեն այս բաշխվածությունը՝ ուսման վճարները կազմում են ԵՊՀ բյուջեի մուտքային մասի շուրջ 62%-ը, պետական ֆինանսավորումը՝ 31%-ը, այլ եկամուտներ (այդ թվում շնորհներ, բանկային տոկոսներ, լրացուցիչ դասընթացներ և այլ)՝ 7% -ը: Վերջին տարիների ֆինանսական հոսքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ տարեց տարի աճել են ԵՊՀ եկամուտներն ու ծախսերը: Գործում են բյուջեի հաշվետվողականության և թափանցիկության չափման միջոցներ: Այնուամենայնիվ, ֆինանսական ռեսուրսները ռազմավարական պլանի և նպատակների հետ փոխկապակցելու քաղաքականություն չկա: Ավելին, ռազմավարական պլանում սահմանված են նպատակներ, որոնց համար բյուջեով գումար չի հատկացված կամ, համենայն դեպքում, այս չափորոշչի շրջանակներում չի քննարկվում: Համալսարանը մտադիր է ապագայում դիվերսիֆիկացնել իր եկամտի աղբյուրները, սակայն չկա վերլուծություն, թե ինչպես է պատրաստվում դա իրականացնել կամ ինչ է ընկած դրա հիմքում:
- 7.3. Հաշվի առնելով ԵՊՀ-ում իրականացվող կրթական ծրագրերի մեծ քանակը՝ ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարման նպատակով դրանք բաշխվում են ոչ թե ըստ կրթական ծրագրերի, այլ ըստ այդ ծրագրերը սպասարկող գիտակրթական ստորաբաժանումների (ֆակուլտետներ, կենտրոններ և այլն): Այդուհանդերձ, ֆինանսական միջոցների հատկացման

հիմքում դրված է կրթական ծրագրերի կամ դրանց խմբի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսային պահանջը: ԵՊՀ բյուջեի եկամուտները կենտրոնացվում են և այնուհետև բաշխվում ըստ առանձին ֆակուլտետների՝ պրոֆեսորադասախոսական կազմի հաստիքների քանակին համապատասխան, անկախ այն հանգամանքից, թե դասախոսի ուսումնական բեռնվածությունը, որ ֆակուլտետում է իրականացվում: Ամեն տարի իրականացվում է անկախ ֆինանսական առողջիւտ: Սակայն բյուջեի կառավարման նման մոտեցման արդյունավետության վերաբերյալ վերլուծություն չկա:

- 7.4.** ԵՊՀ-ում կրթական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների պլանավորումը կատարվում է բուհի առանձին ստորաբաժանումների վարչական կազմի կողմից՝ սեփական կարիքների բացահայտման հիման վրա: Գործող կրթական ծրագրերի ռեսուրսային ապահովածության գնահատման մեխանիզմ է հանդիսանում կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկում, համաձայն որի՝ մեկամյա պարբերականությամբ գնահատվում է նաև ծրագրի ռեսուրսային ապահովածությունը, որի հիման վրա, անհրաժեշտության դեպքում, լրացուցիչ ռեսուրսների ձեռքբերման հայտերը կամ հասցեազրում են ԵՊՀ կենտրոնական վարչակազմին, կամ իրականացվում են ուսումնական ստորաբաժանումների սեփական միջոցների հաշվին:
- 7.5.** Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման բարելավումը համալսարանի ռազմավարական խնդիրներից է: Ինչպես նշված է ինքնավերլուծության գեկույցում, կենտրոնացված տեղեկատվական համակարգը դեռևս մշակման փուլում է: Համալսարանի տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարումն իրականացվում է հետևյալ գործիքամիջոցներով. “SuperVision” էլեկտրոնային տեղեկատվական համակարգով, ԵՊՀ կայքէջով, վարչական գործընթացների ավտոմատացման համակարգով: “Super Vision” համակարգը գործում է տվյալների հավաքագրման և կառավարման արդյունավետությունն ապահովելու համար: ԵՊՀ գործունեության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և վերլուծության մեկ այլ կարևոր մեխանիզմ է “ԵՊՀ գործունեության գնահատման կատարողականի առանցքային ցուցիչները”:
- 7.6.** ԵՊՀ-ում առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների գործունեությունը գտնվում է ԵՊՀ ռեկտորի անմիջական ուշադրության կենտրոնում և համակարգում է ԵՊՀ ընդհանուր հարցերով պրոռեկտորի կողմից: Ինքնավերլուծության գեկույցում նկարագրված է, որ գործում են առողջապահական ծառայություններ և շեշտադրվում է վերջիններիս լավ վիճակը: Ուսանողների և դասախոսների հանգիստը կազմակերպվում է համալսարանի Հայաստանի տարբեր շրջաններում գործող անհրաժեշտ հանգստյան գոտիներում: Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար բժշկական վերապատրաստման դասընթացներից զատ, համալսարանը ոչ մի ծառայություն չի մատուցում, և վերջիններիս որակը վերլուծված չէ: Նույնը վերաբերում է նաև առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողների ուսումնառությանն ու դասավանդմանը: Համալսարանն ունի բավարար անձնակազմ և միջոցներ է ձեռնարկում համապատասխան սանիտարական մակարդակ ապահովելու համար:
- 7.7.** Համալսարանում գործում է ռեսուրսների արդյունավետության, կիրառելիության և առկայության գնահատման երկու հիմնական մեխանիզմներ՝ շրջանավարտների բավարարվածության հարցախույզ և ուսանողների հարցախույզ, որոնց արդյունքների վրա հիմնվելով՝ համալսարանը բարելավման վերաբերյալ որոշումներ է կայացնում: Այնուամենայնիվ, դա բավարար չէ իրավիճակը լիովին պատկերացնելու համար, քանի որ այնպիսի կարևոր շահակիցների կարծիքը, ինչպիսին են դասախոսներն ու վարչական անձնակազմը, վերլուծության ընթացքում հաշվի չի առնվում:

## ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Թվում է՝ համալսարանը հոգում է, որ ապահովի կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան ռեսուրսներ: Միջին հաշվով համալսարանի շենքը (լսարաններ, լաբորատորիաներ) բավականին լավ վիճակում է կահավորման և տեխնիկական ապահովածության տեսանկյունից:

Առկա են ռեսուրսների գնահատման մեխանիզմներ, այնուամենայնիվ, տրամադրված տեղեկատվությունը բավարար չէ հասկանալու՝ արդյոք ռեսուրսները բավարար են ուսումնառություն կազմակերպելու և կրթական որակավորումներ ձեռք բերելու համար:

ԵՊՀ-ում ֆինանսական հոսքերի կառավարումը և վերահսկողությունն իրականացնելու նպատակով կազմվում է բյուջետային մուտքերի և ելքերի տարեկան նախահաշիվ, իսկ ֆինանսական տարվա ավարտից հետո փաստացի տվյալների վերլուծությունների հիման վրա ներկայացվում է տարեկան բյուջեի կատարողականը: Այնուամենայնիվ վերլուծությունը ցույց չի տալիս, թե առաքելության դրույթներն ու ռազմավարական ծրագրի խնդիրներն ինչպես են կապակցված բյուջեի հետ: Ավելին, ռազմավարական պլանում սահմանված են նպատակներ, որոնց համար բյուջեով գումար չի հատկացված կամ, համենայն դեպս, այս չափորոշչի շրջանակներում դա չի քննարկվում: ԵՊՀ բյուջեն ավելի շատ տեղաբաշխված է ըստ ֆակուլտետների, կենտրոնների և այլ միավորների, քան ըստ կրթական ծրագրերի: Ֆակուլտետներն ունեն ինքնավարություն՝ ծախսելու իրենց հատկացված ֆինանսական ռեսուրսները:

ԵՊՀ-ում կրթական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների պլանավորումը կատարվում է բուհի առանձին ստորաբաժանումների վարչական կազմի կողմից՝ սեփական կարիքների բացահայտման հիման վրա: Գործում են ռեսուրսների անհրաժեշտությունը բացահայտող մեխանիզմներ:

Այդուհանդերձ, փորձագիտական խմբի համար հստակ չէ՝ ինչպես է ծրագրի ֆինանսավորման ներքեւից վերև պլանավորումը կապվում ռազմավարական պլանի վերևից ներքև պլանավորմանը:

Համալսարանի տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարումն իրականացվում է հետևյալ գործիքամիջոցներով՝ “SuperVision” էլեկտրոնային տեղեկատվական համակարգով, ԵՊՀ կայքէջով, վարչական գործընթացների ավտոմատացման համակարգով:

Ինչեւ, չկա բավարար չափով հետադարձ կապի վերահսկողություն՝ գնահատելու այդ տվյալների հավաքագրման հուսալիությունն ու հավաստիությունը, ինչպես նաև այն, թե որքան է մարդկային գործոնով պայմանավորված տվյալների աղավաղման ռիսկը:

Ինչպես նշված է ինքնավերլուծական գեկույցում, փաստաթղթերի հոսքային ինտեգրացիոն համակարգը թերի է գործում՝ համապատասխան ֆինանսական միջոցների սղության և աշխատակազմի՝ համակարգից օգտվել չկարողանալու պատճառներով: Չի նշվում նաև տեղեկատվության կառավարման և դրա հուսալիության վերաբերյալ որևէ քաղաքականություն և ընթացակարգ:

Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար բժշկական վերապատրաստման դասընթացներից զատ համալսարանը ոչ մի ծառայություն չի մատուցում, և վերջիններիս որակը վերլուծված չէ: Նույնը վերաբերում է նաև առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողների ուսումնառությանն ու դասավանդմանը: Համալսարանն ունի բավարար անձնակազմ և միջոցներ է ձեռնարկում համապատասխան սանիտարական մակարդակ ապահովելու համար: Համալսարանում գործում է ռեսուրսների արդյունավետության, կիրառելիության և առկայության գնահատման երկու հիմնական մեխանիզմ՝ շրջանավարտների բավարարվածության հարցախույզ և ուսանողների հարցախույզ, որոնց արդյունքների վրա հիմնվելով՝ համալսարանը բարելավման վերաբերյալ որոշումներ է կայացնում:

Հաշվի առնելով վերոնշյալ փաստարկը՝ փորձագիտական խումբը նշում է, որ սահմանափակ ֆինանսավան ռեսուրսների առկայության պարագայում, բուհը կարողացել է կառուցել համապատասխան գրադարան և SS ռեսուրսներ: Խումբը բավարարված է կրթական միջավայրով, և գտնում է, որ վերջիններս բավարար են առաջարկվող կրթական ծրագրերն իրականացնելու համար: Համալսարանը, սակայն, պետք է պարբերաբար գնահատի ֆակուլտետների գործունեության արդյունավետությունը, հատկապես՝ ԵՊՀ ռազմավարության հետագա զարգացման տեսանկյունից: Այդօրինակ գնահատումը պետք է ներառի առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողների և անձնակազմի համար անհրաժեշտ հարմարություններ:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ փորձագիտական խումբը չափանիշ 7-ը գնահատում է բավարար:

### ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Խորիուրդ է տրվում՝

- ներդնել փաստաթղթաշրջանառության ամբողջական էլեկտրոնային համակարգ, որը կհամապատասխանի տեղեկատվության կառավարման քաղաքականությանը և ընթացակարգերին,
- վերլուծել՝ որքանով են առկա ռեսուրսներն ապահովում անհրաժեշտ միջավայր՝ ռազմավարական պլանի նպատակներից բխող կրթական գործունեությունն իրականացնելու համար,
- ստեղծել առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողների և անձնակազմի համար անհրաժեշտ պայմաններ:

### ՉԱՓԱՆԻՇ VIII: ՀԱՍԱՐԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

### ՓԱՍՏԵՐ

- 8.1.** Հաշվետվության համակարգը ԵՊՀ-ում իրականացվում է ռեկտորի տարեկան հաշվետվության, բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունների, վերջնական ֆինանսական հաշվետվությունների, ֆակուլտետների հաշվետվությունների և ԿԳՆ-ին ներկայացվող ամենամյա հաշվետվությունների միջոցով։ Համալսարանն իր գործող հաշվետվության համակարգի հիմնական խնդիրն է համարում վերջինիս նախօրոք հստակորեն պլանավորված չինելը և որոշակի թիրախային ցուցիչների բացակայությունը։ Չափանիշ մեկում համալսարանն արդեն անդրադարձել էր գործառնական և ռազմավարական պլանների կիրառելիությանը։ Ավելին, չի երևում հաշվետվողականության համակարգի արդյունավետությունը որպես վերահսկողության տեսանկյունից։
- 8.2.** ԵՊՀ-ի ընթացակարգերի, գործնթացների թափանցիկության և հասանելիության մեխանիզմներն ամրագրված են մի շարք իրավական ակտերում։ ԵՊՀ Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության հիմնական գործառույթն եղավ բուհ-հասարակություն տեղեկատվական հոսքերի ապահովումն ու հետադարձ կապի կայուն մեխանիզմների հաստատումը (լրագրողների հետ աշխատանք, տեղեկատվության տրամադրման հարցումների պատշաճ պատասխաններ, ինտերնետային ռեսուրսների զարգացում, աշխատանք ՀԿ-ների, այլ բուհերի, պետական և մասնավոր կազմակերպությունների հետ և այլն)։ ԵՊՀ-ն իրականացնում է նաև հետևողական հակառակությունը՝ «Կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների» ծրագիրն իր մեջ պարունակում է մի շարք դրույթներ, որոնք միտված են նպաստելու թափանցիկության և հրապարակայնության ապահովման գործընթացին։ Այնուամենայնիվ, ավելի շատ նկարագրված է բուհի հասարակայնության հետ կապերի գործունեությանը, քան թափանցիկության դրույթները։
- 8.3.** ՄՈՒՀ-ում գործում են հասարակության լայն շերտերից հետադարձ կապի ստացման օնլայն մեխանիզմներ(Վեբ-կայք և Լ. հասցեներ)։ Համալսարանն իր պաշտոնական էջն ունի սոցիալական ցանցերում։ Սոցցանցերի միջոցով ուսանողները, դասախոսները, գործառուները, դիմորդները և շրջանավարտները, ինչպես նաև հասարակության լայն շերտերի ներկայացուցիչները բազմաթիվ հարցեր են ուղղում, պատասխաններ ստանում, վարկանիշեր տալիս, ինչպես նաև ԵՊՀ գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ կարծիքներ արտահայտում։ ԵՊՀ-ում հասարակության հետ կապերի ձևակորմանը նպաստող հետադարձ կապի գործիքներից են նաև հասարակական կարծիքի ուսումնասիրման տարբեր հարցումները։ Այս մոտեցումները համակարգային բնույթ չեն կրում և հազվադեպ են իրականացվում։
- 8.4.** Հասարակությանն արժեքների փոխանցման վաղուց ներդրված մեխանիզմ են հանրային դասախոսությունները մարզային բուհերում և գորամասերում, հանդիպումները հասարակության ամենաստարբեր խավերի ներկայացուցիչների հետ, տարբեր քաղաքացիական շարժումներին և ծրագրերին մասնակցությունը (բնապահպանական, բարեգործական և այլն)։ Այս տեսանկյունից, ՄՈՒՀ-ն Իջևանի մասնաճյուղի միջոցով պատասխանատվություն է կրում տարածաշրջանային զարգացման համար։ ԵՊՀ-ն կազմակերպում է բարձրագույն, հետրուհական մասնագիտական և լրացուցիչ կրթություն, իրականացնում կադրերի վերապատրաստում և որակավորման բարձրացում, գիտահետազոտական աշխատանքներ, մատուցում խորհրդատվական և փորձագիտական ծառայություններ, իրականացնում հրատարակչական աշխատանքներ, կազմակերպում մշակութային միջոցառումներ և այլն։ Համալսարանն աշխատանքներ է տանում հանրակրթական դպրոցների աշակերտների և դիմորդների հետ՝ մատուցելով խորհրդատվական ծառայություններ նրանց մասնագիտական կողմնորոշման բնագավառում։ Փորձագիտական խումբը նկատեց, որ ՄՈՒՀ-ն ունի գիտելիքի և Էթիկային վերաբերող արժեքների փոխանցման ավանդույթ, սակայն առաջարկում է նմանատիպ գործունեությունը պարբերաբար գնահատել։

## ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Համալսարանն ունի հաշվետվողականության երկու մակարդակ: Այն հաշվետու է Կառավարությանը և ենթարկվում է օրենքներին: Բացի այդ, առկա է ներքեսից վերև հաշվետվողականության ներքին համակարգ, որի արդյունքում տրվում է համապարփակ տարեկան հաշվետվություն համալսարանի ուսումնական գործընթացների վերաբերյալ:

Համալսարանը հասարակությանն ապահովում է իր ընթացակարգերի և գործընթացների թափանցիկությունն ու հասանելիությունը կայքի, թերթերի և իր տարբեր ստորաբաժանումների կողմից տրամադրված տեղեկատվության միջոցով: ԵՊՀ ընթացակարգերի և գործողությունների թափանցիկության ու հասանելիության մեխանիզմները սահմանված են մի շարք իրավական ակտերով:

Համալսարանի կողմից տրամադրված տեղեկատվությունը թույլ չի տալիս հասկանալ ԵՊՀ-ում ընթացակարգերի թափանցիկությունն ապահովող մեխանիզմները: Հասկանալի չեն նաև, թե որ փաստաթղթերն ու ընթացակարգերն են հասանելի/բաց հանրությանը՝ ԵՊՀ-ի կողմից առաջարկվող կրթական ծառայություններն առավելագույնս վստահելի դարձնելու համար:

Համալսարանը համագործակցում է Կառավարության, ձեռնարկությունների և հասարակական այլ հաստատությունների հետ: Հասանելի են հանրության ավելի լայն շերտերից հետադարձ կապի հավաքագրման մեխանիզմներ: Այնուամենայնիվ, չկա այդ մոտեցումների արդյունավետության վերլուծություն, և ուսումնասիրված չէ, թե որքանով են դրանք նպաստում հանրության հետ ամուր և արդյունավետ կապերի հաստատմանը:

**Հաշվի առնելով վերոնշյալ փաստարկը՝** փորձագիտական խումբը գտնում է, որ համալսարանի հասարակական պատասխանատվությանը միտված գործընթացներն ընդհանուր առմամբ թափանցիկ են, օրինակ՝ արդյունքները հրապարակվում են՝ տեղադրվելով կայքում և այլ լրատվամիջոցներում: Այս գործընթացների արդյունավետությունը հետագա ուսումնասիրության կարիք ունի: Փորձագիտական խումբը դասախոսական կազմի ներգրավվածությունը հասարակական տարրեր գործունեություններում համարում է աշխատակազմի գնահատման մաս: Այս գործընթացները նպաստում են, որպեսզի համալսարանը հասնի հասարակությանը ծառայող նպատակներին:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝** Փորձագիտական խումբը չափանիշ 8-ը գնահատում է բավարար:

## ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Խորհուրդը է տրվում՝

- գնահատել հաշվետվության համակարգի արդյունավետությունը,
- մշակել թափանցիկության ապահովման քաղաքականություն,
- վերլուծել հասարակության լայն շերտերից հետադարձ կապի հավաքման գործող մեխանիզմների արդյունավետությունը:

## ՉԱՓԱՆԻՇ IX: ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻԶԱՋԳԱՅՆԱՑՈՒՄԸ

Արտաքին կապերի միջոցով ՍՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

### ՓԱՍՏԵՐ

- 9.1. ԵՊՀ-ն ունի ակտիվ միջազգային բաժին, որը համակարգում և զարգացնում է համալսարանի արտաքին կապերն ու միջազգայանացումը: Միջազգայնացումը հիմնականում ներառում է համատեղ հետազոտական ծրագրերը, մասնագիտական և ուսանողական շարժունությունը, միջազգային մասնագիտական ցանցերին անդամակցությունը և միջմշակութային հաղորդակցությունը: Այնուամենայնիվ, միջազգայնացումն իր լայն իմաստով համալսարանի քաղաքականության մեջ դեռևս չի գործում, քանի որ կրթական ծրագրերի միջազգայնացումն ու մատուցած ծառայությունների միջազգայանցումը դեռ պլանավորված չեն: Փորձագիտական խումբը նկատեց բազում չպլանավորված ժամանակավոր նախաձեռնություններ, սակայն միջազգայնացման ամբողջական քաղաքականություն դեռևս չկա: Համալսարանը պլանավորել է մշակել միջազգայնացման նոր հայեցակարգ, քաղաքականություն և իրականացման ռազմավարություններ՝ միջազգայանցման համակարգային մոտեցում ապահովելու նպատակով: Այս առումով, լավ օրինակ կարող է ծառայել կրթական, մեթոդաբանական բաժնի փորձաքննությունը և արդեն իսկ գործող լավագույն փորձը:
- 9.2. Համալսարանը հիմնել է արտաքին կապերի բաժին, որը զբաղվում է օտարերկրացի ուսանողների ընդունելությամբ, ուսանողների փոխանակմամբ և շարժունությամբ, միջազգային ծրագրերով, պաշտոնական փաստաթղթերի կարգավորմամբ և այլնով: Ավելին, գործողությունների սահուն ընթացքին վերաբերող խոչընդոտները պայմանավորված են միջազգային կապերի բաժնի և ֆակուլտետների միջև չկարգավորված հարաբերություններով, որն ել հանգեցնում է տեղեկատվության թերի փոխանցմանը: Միջազգայնացման որդեգրած այս մոտեցումների արդյունավետությունը և թե որքանով են այդ գործողությունները նպաստում ԵՊՀ-ի առաքելության և ռազմավարական նպատակների իրականացմանը, դեռևս ուսումնասիրված չեն:
- 9.3. ԵՊՀ-ն համագործակցության համաձայնագրեր և պայմանագրեր ունի աշխարհի շուրջ 50 երկրներում գործող ավելի քան 200 համալսարանների, ինստիտուտների և միջազգային կազմակերպությունների հետ: Ավելին, ՍՈՒՀ-ը ներգրավված է մի քանի միջազգային կրթական և հետազոտական ծրագրերում: Այնուամենայնիվ, այս համաձայնագրերի արդյունավետությունը գնահատման կարիք ունի դրանց ազդեցության և ԵՊՀ ռազմավարական նպատակների ձեռքբերմանը նպաստելու առումով:
- 9.4. ԵՊՀ անձնակազմի օտար լեզվի իմացությունը բավականին ցածր է. անձնակազմի մոտ առկա են հետևյալ ցուցանիշերը՝ 30%-ի մոտ լեզվի իմացությունը միջին մակարդակի է, 20%-ի մոտ՝ սահուն, իսկ 10%-ը՝ ընդհանրապես չի տիրապետում լեզվին: Ուսանողների լեզվի իմացությունը միջին մակարդակի վրա է, չնայած որոշ ուսանողներ, ովքեր ներգրավված են միջազգային ծրագրերում կամ աշխատում են միջազգային կազմակերպությունների հետ, տիրապետում են փայլուն անգլերենի:

### ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ-ն ունի ակտիվ միջազգային բաժին, որը համակարգում և զարգացնում է համալսարանի արտաքին կապերն ու միջազգայանացումը: Փորձագիտական խումբը նկատեց

բազում շպլանավորված ժամանակավոր նախաձեռություններ, սակայն միջազգայնացման ամբողջական քաղաքականություն դեռևս չկա:

Համալսարանը հիմնել է արտաքին կապերի բաժին, որը զբաղվում է օտարերկրացի ուսանողների ընդունելությամբ, ուսառղների փոխանակմամբ և շարժունությամբ, միջազգային ծրագրերով, պաշտոնական փաստաթղթերի կարգավորմամբ և այլնով: Այդուհանդերձ, փաստերը ցույց էն տալիս, որ համալսարանը դեռևս կարգավորող փաստաթղթերի մշակման կարիք ունի, օրինակ՝ համապատասխան միավորի/ստորաբաժանման գործունեության, գործողությունների պլանի, մշտադիտարկման և գնահատման մեխանիզմի և այլ հարցերի առնչությամբ: Ավելին, աշխատակազմի անգլերեն լեզվի իմացությունը դեռևս ցածր մակարդակի վրա է, ինչը խոչընդոտում է միջազգայնացման գարգացմանը:

Համալսարանն ունի մեծ թվով համագործակցության համաձայնագրեր և պայմանագրեր, և ակնհայտ է, որ այն ընդգրկված է մի շարք միջազգային ծրագրերում, սակայն վերլուծական և քննադատական վերլուծությունների բացը թույլ չի տալիս փորձագիտական խմբին հասկանալ, թե որքանով են այդ ծրագրերն արդյունավետ, ինչ ազդեցություն ունեն, ինչպիսի շարունակություն կլինի ծրագրերի իրականացումից հետո, և ինչպես են դրանք նպաստում համալսարանի առաքելության և նպատակների իրականացմանը:

Համալսարանը քայլեր է ձեռնարկում լեզվական գիտելիքների և հմտությունների մակարդակը բարձրացնելու ուղղությամբ՝ կազմակերպելով լեզվի դասընթացներ բոլոր ուսանողների և դասախոսների համար: Այնուամենայնիվ, պարզ չէ, թե արդյոք այդ դասընթացներն արդյունավետ են, և արդյոք միջազգային ազդեցության տեսանկյունից բավարարում են մասնակիցներին:

Փորձագիտական խումբը գովելի է համարում տեղեկատվական, լավ կառուցվածք ունեցող և թարմացված կայքեզր նաև անգլերեն լեզվով, որը բավարարում է արտաքին կարիքները և ապահովում համալսարանի տեսանելիությունը:

**Հաշվի առնելով վերոնշյալ փաստարկը՝** փորձագիտական խումբը գնահատում է համալսարանի ակնհայտ մղումը դեպի միջազգայնացումը: Այն ունի միջազգային բաժին, որը ձեռնարկում է մի շարք քայլեր՝ կազմակերպելու և զարգացնելու արտաքին կապերը: Այդուհանդերձ, դասախոսական կազմի անգլերեն լեզվի իմացության ցածր մակարդակը լուրջ խնդիր է այդ զարգացումներն ապահովելու տեսանկյունից: Զերնարկվել են միջոցներ՝ հաղթահարելու այդ ակներև բացթողումը: ԵՊՀ-ն ճիշտ ճանապարհի վրա է գտնվում, այդ իսկ պատճառով փորձագիտական խումբը հանգել է այս եզրահանգմանը:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Փորձագիտական խումբը չափանիշ 9-ը գնահատում է բավարար:**

## **ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

Խորհուրդ է տրվում՝

— մշակել միջազգայնացման ամբողջական ռազմավարություն,

- մշակել միջազգային կապերի վարչության գործառնական պլաններ, մշտադիտարկման և գնահատման մեխանիզմներ և որդեգրել կենտրոնի առաքելությանը համապատասխան աշխատելառ,
- ուսումնասիրել ԵՊՀ առաքելության և ռազմավարական նպատակների իրականացմանը նպաստող գործողությունների արդյունավետությունը,
- վերլուծել՝ ինչ ազդեցություն ունեն միջազգային ծրագրերը համալսարանի առաքելության և նպատակների իրականացման վրա,
- բարելավել ուսանողների, դասախոսների և վարչական անձնակազմի անգլերեն լեզվի իմացությունը,
- բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում մշակել մոդուլներ անգլերեն լեզվով,
- մեծացնել ուսանողների և անձնակազմի շարժունությունը,
- իրականացնել միջազգային բենչմարքին ինստիտուցիոնալ մակարդակով: Լավ օրինակ կարող է հանդիսանալ կրթական մեթոդաբանական վարչության փորձը:

## **ՉԱՓԱՆԻՇ X: ՈՐԱԿԻ ՆԵՐՁԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳ**

**ՄՈՒՀ-Ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:**

### **ՓԱՍՏԵՐ**

- 10.1, 10.3 – Որակի ապահովման ներքին համակարգը մշակվել ու ընդունվել է 2007թ.-ին և վերանայվել 2012թ.-ին՝ ՈԱԵՉՈՒ պահանջներին ամբողջովին համապատասխանելու նպատակով: ԵՊՀ որակի ապահովման համակարգը հիմնադրվել է 2008թ.-ին: Որակի ապահովման մի շարք էական մեխանիզմներ և գործընթացներ մշակվել են վերջերս: Ներկայումս առկա են մի շարք մեխանիզմներ՝ դասավանդման արդյունավետության և որակի, պրոֆեսորադասախոսական անձնակազմի, կրթական ծրագրերի որակի ապահովման ստուգման համար: Որակի ապահովման բոլոր մեխանիզմներն ու ընթացակարգերը հրապարակվել և տարածվել են համալսարանի բոլոր կրթական և վարչական միավորների շրջանում, ինչպես նաև ԵՊՀ պաշտոնական փաստաթղթերի կայքէջում՝ ապահովելով դրանց հասանելիությունն արտաքին շահակիցներին և հանրությանը: Ուսանողներն ու արտաքին շահակիցներն իրենց հասուլ մասնակցությունը ունեն որակի ապահովման գործընթացներում: Շահակիցներն ընդգրկված են ինստիտուցիոնալ և ծրագրային ինքնազնահատում իրականացնող և համապատասխան հաշվետվություններ կազմող հանձնաժողովներում և աշխատանքային խմբերում: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ինքնազնահատաման գեկույցի որակը, այն պարունակում է անհրաժեշտ տեղեկատվություն՝ հիմնված համապատասխան գնահատման արդյունքների վրա: Ինքնազնահատման գեկույցը բավականաշատ ինքնաքննադատական էր և ներկայացնում էր ներքին գնահատման գործընթացների արդյունքները, որում ներգրավված են բոլոր շահակիցները: Փորձագիտական հավատարմագրմանը մասնակցությունը ցույց տվեց, որ որակի ներքին ապահովումը**

համապատասխանաբար ուղղված է որակի արտաքին ապահովմանը, այնուամենայնիվ, դեռևս չի նկատվում որակի ապահովման մշակման համակարգված մոտեցում և շարունակական դինամիկա: Առկա չեն մոտեցումների արդյունավետության վերլուծություններ և հստակ չեն, թե որքանով են դրանք նպաստել ԵՊՀ որակի բարելավմանը և դրանով իսկ ԵՊՀ առաքելությանը: Առկա են բավականաշափ ցուցիչներ առ այն, որ Իշխանի մասնաճյուղն իրականացրել է ԵՊՀ որակի ապահովման քաղաքականությունը. առանձին դեպքերում մասնաճյուղը գտնվում է առջևում:

- 10.2.** ԵԶՈՒ պահանջներին համապատասխան ՈԱ ներքին համակարգի կառուցումն անհրաժեշտություն առաջացրեց ստեղծելու ինքնուրույն, համահամալսարանական մասնագիտացված կառույց՝ ՈԱ ավելի լայն և մասնագիտացված գործառույթներ իրականացնելու նպատակով: Այդ իսկ պատճառով, ստեղծվեց ԵՊՀ Որակի ապահովման կենտրոնը (ՈԱԿ), որի հիմնական նպատակը համալսարանում ԵԶՈՒ պահանջներին համահունչ ՈԱ ներքին մեխանիզմների և ընթացակարգերի գործադրումը և որակի շարունակական բարելավման մշակույթի խթանումն է: Համալսարանն ունի համապատասխան մարդկային և նյութական ռեսուրսներ որակի ապահովման գործընթացներն իրականացնելու համար, սակայն հստակ չեն, արդյոք կազմակերպչական կառուցվածքը բավարար է համալսարանի ծավալների համար կամ թե ՈՆՍ համակարգը համապատասխանաբար արտացոլում է համակարգի կիրառելիությունը: Փորձագիտական խումբը նշում է, որ ԵՊՀ դեռևս չունի Որակի ապահովման ձեռնարկ և շեշտադրում է վերջինիս կարևորությունը, քանի որ այն կարող է հանդիսանալ համալսարանի ՈԱ ավետարանը:
- 10.4.** ՈՆՍ-ն ձևավորման փուլում է և պլանավորված է արտաքին գնահատման առաջին շրջափուլից հետո վերանայել: Ակնհայտ է, որ որակի մշակույթը դեռևս ամբողջովին ձևավորված չեն, սակայն փորձագիտական խումբը տպավորված է վերջին տարվա ձեռքբերումներով, որոնք, այնուամենայնիվ, հանգստանալու պատճառ չպետք է հանդիսանան: Դեռևս լուրջ և կարևոր անելիքներ կան: ԴԻՄԲ շրջափուլը պետք է փակվի, իսկ իրականացվող գործողությունները պետք է շարունակական բնույթ կրեն:

- 10.5, 10.6.** Հստակ չեն, թե ՈՆՍ համակարգը որքանով է ապահովում վավեր և բավարար հիմքեր որակի արտաքին ապահովման համար: Թափանցիկությունն ապահովվում է որոշ փաստաթղթերի և հաշվետվությունների հանրային մատչելիությամբ, սակայն, քանի որ սա ինքնավերլուծության առաջին փորձն էր, կրթական ծրագրերի և հաստատության որակի վերաբերյալ հաշվետվությունները դեռևս հանրային մակարդակով հասանելի չեն:

## ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Սկսած 2012 թվականից՝ ԵՊՀ-ն ունի որակի ներքին ապահովման քաղաքականություն, որը համահունչ է եվրոպական չափորոշիչների և ուղենիշերի պահանջներին, և գործադրում է մի շարք մեխանիզմներ՝ ստուգելու դասավանդման և դասախոսական կազմի որակը և ապահովելու ՄԿԾ-ների որակը: Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում, ինչպես նաև հանձնաժողովներում և աշխատանքային խմբերում, որոնք իրականացնում են ենթակառուցվածքային և ծրագրային հավատարմագրման համար ինքնավերլուծության գործընթացներ և պատրաստում են համապատասխան գեկույցներ: Այնուամենայնիվ, դեռ շատ վաղ է հավաստել որակի ապահովման մեթոդաբանության

արդյունավետությունն ԵՊՀ որակի բարելավման խնդրում: Համալսարանը դեռևս որակի ապահովման համապարփակ ձեռնարկի մշակման կարիք ունի:

Առկա են բավարար հիմքեր առ այն, որ Իջևանի մասնաճյուղն իրականացնում է ԵՊՀ որակի ապահովման քաղաքականությունը: Որոշ դեպքերում մասնաճյուղն ավելի առաջ է գտնվում:

Համալսարանն ունի համապատասխան մարդկային և նյութական ռեսուրսներ՝ իրականացնելու որակի ապահովման գործընթացները, սակայն պարզ չէ՝ արդյոք որակի ներքին ապահովման այս մոտեցումները բավարար և արդյունավետ են ողջ համալսարանի համար:

**Ըստհանուր առմամբ փորձագիտական խումբը դրական է գնահատում ինքնազնահատման զեկույցի որակը:** Այն պարունակում է վերլուծության արդյունքների վրա հիմնված անհրաժեշտ տեղեկատվություն: Ինքնազնահատման զեկույցը բավական ինքնաքննադատական էր և ներառել էր ներքին գնահատման արդյունքները: Մասնակցությունը փորձնական հավատարմագրման գործընթացում ցույց տվեց, որ որակի ներքին ապահովումը համապատասխան հենք է նախապատրաստում արտաքին գնահատման համար: Ակնհայտ է, որ որակի մշակույթն ամբողջապես զարգացած չէ, և որ ՊԻՄԲ շրջափուլը դեռ փակված չէ: Այդուհանդեռձ, փորձագիտական խումբը գնահատում է համալսարանի վերջին տարիների ձեռքբերումները:

Հետևելով չափանիշ 10-ի ընդհանուր նկարագրությանը՝ փորձագիտական խումբն այն գնահատում է դրական՝ հաշվի առնելով այն փաստը, որ որակի ներքին ապահովման քաղաքականությունը նվիրված աշխատակիցների կողմից միայն վերջերս է մշակվել:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Փորձագիտական խումբը չափանիշ 10 գնահատում է բավարար որոշակի նկատառումներով:**

## **ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

**Խորհուրդ է տրվում՝**

- Իջևանի մասնաճյուղն ավելի ուղղակիորեն ներգրավել համալսարանի ներքին որակի ապահովման համակարգում՝ ամբողջովին հաշվի առնելով մասնաճյուղի ներքին որակի ապահովման համակարգի արդյունքները,
- մշակել համընդգրկուն որակի ապահովման ձեռնարկ,
- ԵՊՀ կառավարման բոլոր մակարդակներում փակել ՊԻՄԲ շրջափուլը,
- SWOT վերլուծություններում ներառել նաև հնարավորություններ և ռիսկեր բաժինները և ցույց տալ՝ ինչպես ռիսկերը կարող են հնարավորություն դառնալ և հակառակը:

## 6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ

ՉԱՓԱՆԻՇ	ՈՐՈՇՈՒՄ
I. Առաքելություն և նպատակներ	ԱՅՈ
II. Կառավարում և վարչարարություն	ԱՅՈ
III. Կրթական ծրագրեր	ԱՅՈ
IV. Ուսանողներ	ԱՅՈ
V. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	ԱՅՈ
VI. Հետազոտություն և գարգացում	ՈՉ
VII. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	ԱՅՈ
VIII. Հասարակական պատասխանատվություն	ԱՅՈ
IX. Արտաքին կապեր և միջազգայնացում	ԱՅՈ
X. Որակի ներքին ապահովման համակարգ	ԱՅՈ

## **7. ԳՈՐԾՎԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ**

Փորձագիտական խումբը կատարել է դիտարկումներ, որի արդյունքում տրվել են մի շարք խորհրդատվություններ՝ համալսարանի՝ ելքոպական բարձրագույն կրթական տարածք (ԵԲԿՏ) ինտեգրվելու հավակնության վերաբերյալ: Փորձագիտական խումբն արձանագրել է բազմաթիվ խոստումնալից փաստեր, սակայն ճանապարհը դեպի “Բոլոնիա” երկար է և պահանջկուտ:

Փորձագիտական խումբը ցանկանում է հանդես գալ որոշակի խորհրդատվությամբ, որը կօգնի համալսարանին ԵԲԿՏ ինտեգրվելու հարցում: Այս խորհրդատվությունների մեծ մասը նախատեսված է՝ խրախուսելու համալսարանին շարունակել աշխատել նույնությամբ: Ընդհանուր առմամբ՝ փորձագիտական խմբի խորհրդատվությունները վերաբերում են՝ Բոլոնյան գործընթացին համապատասխան փոփոխություններ իրականացնելու համալսարանի ձգտմանը: Այդ խնդիրները հիմնականում վերաբերում են՝ արտաքին շահակիցների հետ առավել արդյունավետ համագործակցությանը, կրթական հայեցակարգի հետազա արդիականացմանը, հետազոտության ծավալի և որակի բարձրացմանը, ինչպես նաև միջազգայնացման գործում հետազա ներդրումներին:

### **Դիտարկումներ**

1. Բուհը գտնվում է անցումային շրջանում: Փորձագիտական խումբը բուհի ռազմավարության և գործող իրավիճակի միջև անհամապատասխանություն է տեսնում:
2. Ծրագրերն ավելի շատ ավանդական են դասախոսակենտրոնության և առարկայակենտրոնության տեսանկյունից: Ավելի մեծ շեշտադրում կատարվում է տեսական գիտելիքի վրա, քան հմտությունների և մասնագիտական վարքագծի ձևավորման: Եթե բուհը նպատակադրված է ծրագրերը ժամանակակից դարձնել պետք է որդեգրի ուսանողակենտրոն և բազմադիսցիպլինար մոտեցում:
3. Հետազոտական գործունեությունը սահմանափակ է՝ հաշվի առնելով և՝ արդյունքները և՝ հետազոտության մեջ ներգրավված ուսանողների և դասախոսների թիվը:
4. Ակնկալվող ուսումնառության արդյունքների և զնահատման համակարգի միջև կապը հստակ չէ, հատկապես՝ հմտությունների և մասնագիտական վարքագծի զնահատումն ունի հետազա բարելավման կարիք:
5. Շատ քիչ ուսանողներ են մասնակցում միջազգային գործունեությանը, ինչպես նաև անձնակազմից ոչ բոլորն են ներգրավված միջազգայնացման գործընթացում:
6. Փորձագիտական խումբը չտեսակ միջազգային բենչմարքինքի մասին վկայող փաստեր: Որոշ ամբիոններում իրականացվում էր միջազգային բենչմարքինք, սակայն վերջինիս չէր իրականացվում ինստիտուցիոնալ մակարդակով:
7. Առկա է տվյալների հավաքագրման մեխանիզմ, սակայն դեռևս ամբողջովին մշակված և ներդրված չէ:
8. Կրթական ծրագրերի որակի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ներքին համակարգը խճճված է:
9. Առկա են բավարար հիմքեր տարբեր խորհուրդներում ներքին շահակիցների ներգրավվածության վերաբերյալ, սակայն արտաքին շահակիցների ներգրավվածությունը սահմանափակ է: Բացի այդ, արտաքին շահակիցների հետ հաղորդակցությունը հիմնականում ոչ պաշտոնական բնույթ է կրում:

### **Խորհրդատվություն**

1. Համալսարանը պետք է փորձի իր ներքին կառուցվածքը դարձնել ավելի պարզ, հետևաբար՝ առավել արդյունավետ: Լավ սկիզբ կարող է լինել մի շարք հանձնաժողովների համախմբումը՝

դրանով իսկ նվազեցնելով դրանց քանակը: Ի վերջո համալսարանը կարող է ընտրել ոչ ուռնացված կազմակերպական կառույցի մի տարբերակ, որը կշարունակի հիմնվել կողեզիալ ակադեմիական մշակույթի վրա:

2. Արդեն առկա որակի մշակույթը խորացնելու նպատակով՝ փորձագիտական խումբը ընդգծում է, որ անձնակազմը և ուսանողները պետք է օգուտ քաղեն որակի ապահովումից, այլ ոչ դիտարկեն այն որպես բեռ:
3. Համալսարանը պետք է համապատասխանի որակավորումների ազգային շրջանակով սահմանված մակարդակներին, իսկ կրթական ծրագրերն՝ ակադեմիական կրթության եվրոպական չափանիշերին:
4. Որպեսզի կիրառվեն ժամանակակից դասավանդման և ուսումնառության մեթոդներ՝ փորձագիտական խումբը խորհուրդ է տալիս ինստիտուցիոննալ մակարդակում մշակել կրթական հայեցակարգ, որը կանդրադառնա հետազոտությանը միտված կրթությանը և դասավանդողների վերապատրաստմանը: Պետք է մշակել հստակ կրթական հայեցակարգ՝ հիմնված վերջին միջազգային միտումների վրա: Ներդնելով այս հայեցակարգը՝ ֆակուլտետները կարող են վերջինս համապատասխանեցնել նպատակին: Ուսումնամեթոդական վարչությունը կարող է իր վրա ստանձնել հայեցակարգի մշակման պատասխանատվությունը՝ ներգրավելով բոլոր ներքին շահակիցներին: Համալսարանում առկա լավագույն փորձի ներկայացումը նույնպես կարող է օգտակար լինել: Նույն վարչությունը պետք է իրականացնի համապատասխան վերապատրաստումներ՝ նոր մշակված հայեցակարգը բոլոր դասավանդողներին ամբողջովին ընկալելի դարձնելու համար:
5. Ներդրումներ կատարել կրթական հայեցակարգի մշակման, ներառյալ՝ հետազոտությանը միտված կրթության և դասավանդողների՝ ժամանակակից դասավանդման և ուսումնառության մեթոդների իրականացմանը միտված վերապատրաստման մեջ: Պետք է մշակել կրթական հայեցակարգ՝ հիմնված վերջին միջազգային միտումների վրա: Ներդնելով այս հայեցակարգը՝ ֆակուլտետները կարող են վերջինս համապատասխանեցնել նպատակին: Ուսումնամեթոդական վարչությունը կարող է իր վրա ստանձնել հայեցակարգի մշակման պատասխանատվությունը՝ ներգրավելով բոլոր ներքին շահակիցներին: Համալսարանում առկա լավագույն փորձի ներկայացումը նույնպես կարող է օգտակար լինել: Նույն վարչությունը պետք է նաև հետևի, որ բոլոր դասավանդողներն ամբողջովին հասկանան նոր մշակված հայեցակարգը: Բացի այդ, համալսարանը պետք է իրականացնի դասավանդողների պարտադիր վերապատրաստումներ:
6. Ժամանակակից կրթական հայեցակարգի առանցքային բառերն են՝
  - ուսումնական պլանի՝ միջազգային բենչմարքինգ անցած նախագիծ, որը կպարունակի նախօրք սահմանված անկնկալվող ուսումնառության արդյունքները,
  - ուսանողակենտրոն ուսումնառություն՝ ուսումնառողների ինտերակտիվ մասնակցությամբ և փոքր խմբերով ուսումնառությամբ,
  - խնդիրների վրա հիմնված ուսումնառություն,
  - բազմադիսցիպլինար մոտեցում՝ առավել հորիզոնական ինտեգրմամբ,
  - բակալավրի հենց առաջին կուրսից հետազոտության և կրթության ամուր փոխկազմակցում:

7. Փորձագիտական խումբը կոչ է անում համալսարանին ընդարձակել իր հետազոտական գործունեությունը, որը կարող է իրականացվել՝ ջանքերը հիմնականում կենտրոնացնելով գերազանցության կենտրոնների սահմանափակ քանակի վրա՝ ներառյալ այլ հաստատությունների ներդրումը, ինչպիսին է՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան կամ Բժշկական համալսարանը: Այս կենտրոնները կարող են խթանել նորարարությունը և հանդես գալ որպես հիմնաքար՝ հետազոյւմ դասավանդման և ուսումնառության մեթոդների մշակման գործընթացում: Այս նոր աշխատելատճր կիանզեցնի առավել շատ միջառարկայական ծրագրերի, և փորձագիտական խումբը ցանկանում է խրախուսել համալսարանին ներդնել ծրագրերի նախագծման այս՝ առավել ժամանակակից հայեցակարգը:
8. Համալսարանը մեծ ներդրումներ է անում միջազգային հարաբերություններում, փորձագիտական խումբը խրախուսում է համալսարանին շարունակել նույնությամբ: Առավել մեծ ուշադրություն պետք է դարձնել՝ անձնակազմի և ուսանողների շրջանում անգլերեն լեզվի իմացությանը և շարժունության մեծացմանը:
9. Փորձագիտական խումբ խորհուրդ է տալիս իրականացնել միջազգային բենշմարքինգ ինստիտուցիոնալ մակարդակով: Այստեղ նորից կարող են օգտակար լինել ուսումնամեթոդական վարչությունը, ինչպես նաև համալսարանում առկա լավագույն փորձի օրինակները:
10. Վերջին խորհրդատվությունը վերաբերում է արտաքին շահակիցների հետ հարաբերություններին: Փորձագիտական խումբը ցանկանում է խրախուսել համալսարանին մշակել ռազմավարական համագործակցություն արտաքին շահակիցների և հասարակության հետ: Համալսարանը նաև պետք է բարելավի շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմները: Այդ ամենն իրականացնելու համար նպաստավոր կյանքի սերտ համագործակցումը Հայաստանի այլ համալսարանների հետ՝ փորձի փոխանակման նպատակով:

## **ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**Դոկտոր պրոֆեսոր Բեն Վան Քեմփ - 1971թ.-ին ստացել է Ներքին բժշկության, հեմատոլոգիայի մասնագետի կոչում: 1980 թ.-ին ստացել՝ գիտության դոկտորի կոչում:**

### **Ներկա պաշտոնը**

Բրյուսելի համալսարանական կլինիկայի կառավարման խորհրդի և համալսարանի բժշկական կենտրոնի ստուգող հանձնաժողովի նախագահ:

2011թ.-ից հանդիսանում է «Բարձրագույն կրթության ենթակառուցվածքային կառավարման (OECD)» ծրագրի անդամ, Ֆլումանդական Բնտերհամալսարանի խորհրդի (VLIR) լիազոր ներկայացուցիչ:

1988թ.-ից սկսած հեմատոլոգիայի պրոֆոսոր է:

### **Նախկին պաշտոններ**

2000- 2008թ.-ը եղել է Բրյուսելի Ազատ համալսարանի (Vrije Universiteit Brussel) ռեկտոր, իսկ 1994-2000թ.-ին՝ բժշկության ֆակուլտետի դեկան: Երկու պաշտոններում էլ համատեղել է համալսարանի կրթական և վարչական կառավարումը և դեկավարել է «Բոլոնիայի» հոչակագրով սահմանված փոփոխությունների իրականացումը՝ շեշտադրումը կատարելով սահմանված առաքելության բոլոր ասպեկտների (հետազոտություն, կրթություն և հասարակական պատասխանատվություն) որակի ապահովման և ուսումնական պլանների վերանայման հարցերին:

2007-2011թ.-ին որպես UNICA (Եվրոպական մայրաքաղաքների համալսարանների ցանցի) հանձնաժողովի անդամ մասնակցել է մի շարք համալսարանների արտաքին գնահատման գործընթացներում, ինչպես նաև որպես նախաձեռնող հանդես է եկել միջազգային համատեղ մագիստրոսական և ասպիրանտական ծրագրերի իրականացմանը:

1985-2012թ.-ին զբաղեցրել է Բրյուսելի կլինիկական հեմատոլոգիայի բաժնի դեկավարի պաշտոնը:

### **Պարզեներ**

Belgian Franqui Chair University of Antwerp (2001); Ֆլումանդական բժշկական թագավորական ակադեմիայի անդամ (2002); Բելգիայի Ալֆերտ II թագավորը պարգևատրել է նրան բարոնի կոչմամբ (2007):

**Պրոֆեսոր Յ.Վ. Կայնե - (1947), Լեյդեն համալսարանի բիոգիտությունների պաշտոնաթող պրոֆեսոր: 1994-1997թթ. եղել է ֆիզտեխնոլոգիաների պրոֆեսոր, 1997-2006թթ.՝ բույսերի ֆիզիոլոգիայի և 2006-2010թթ. բիոգիտությունների պրոֆեսոր Լեյդենում: 1995-2000թթ. եղել է Նորվեգիայի Թրոմս համալսարանի միկրոկենսաբանության իրավիրված պրոֆեսոր: 1996-2002թթ. Լեյդենում զբաղեցրել է կենսաբանության ծրագրերի գծով տնօրենի պաշտոնը, 2002-2008թթ.՝ Գիտությունների ֆակուլտետի փոխդեկանի պաշտոնը, իսկ 2004-2008թթ.՝ Լեյդենի նախահամալսարանական քոլեջի գիտական տնօրենի պաշտոնը: Յան Կայնեն Նիդերլանդներում եղել է կենսաբանության ծրագրերի գնահատման հանձնաժողովի նախագահ և տարբեր գնահատման հանձնաժողովների անդամ:**

**Պրոֆեսոր Յուրի Սուվարյան - 1965թ.-ին ավարտել է ԵՊՀ-ն: Ստացել է տնտեսագիտության ոլորտում դիվլումավորված մասնագետի որակավորում: 1970թ.-ին պաշտպանել է թեկնածուական ասենախտությունը “Աշխատանքի արտադրողականության և աշխատավարձի հարաբերակցությունը մեքենաշինության մեջ” թեմայով և ստացել տնտեսագիտության թեկնածուի**

զիտական աստիճան, 1974թ.-ին՝ դոցենտի կոչում: 1984թ.-ին պաշտպանել է դոկտորական աստենախոսությունը “Ամբողջական աշխատանքի արտադրողականության կառավարումը” թեմայով և ստացել է տնտեսագիտական գիտությունների դոկտորի աստիճան: 1986թ.-ին՝ պրոֆեսորի կոչում, 2010թ.-ին՝ ակադեմիկոսի կոչում:

Հիմնական հետազոտական աշխատանքները նվիրված են մակրոտնտեսագիտության, կառավարման տեսության, ռազմավարական կառավարման մեթոդաբանության, հանրային կառավարման տեսության և պատմության, գիտակրթական համակարգի կառավարման հիմնախնդիրներին, հայ կառավարչական մտքի պատմության հիմնախնդիրներին:

Ունի հրատարակված ավելի քանի 240 գիտական աշխատությունները, այդ թվում 33 գիրք, որոնք առնչվում են վերոնշյալ հիմնախնդիրներին:

2011թ.-ից զբաղեցնում է ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժնի ակադեմիկոս քարտուղարի պաշտոնը, նախագահության անդամ է: 1994թ.-ից Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ամբիոնի վարիչն է: 1968-1975թ. եղել է ԵՊՀ ասիստենտ, 1975-87թթ.-ից դոցենտ Երևանի ժողովնախոսության ինստիտուտում, ապա՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դոցենտ, պրոֆեսոր, 1987-94 թթ. գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, 2006-11թ.-ից՝ ռեկտոր, 1992-93թթ.՝ ՀՀ վարչապետի խորհրդական:

Հանդիսանում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահ: Մենեջմենթի հայկական ընկերակցության նախագահ: Մի շաբթ գիտական հանդեսների խմբագրական խորհուրդների անդամ:

Մասնակցել է մի շաբթ տեղական և միջազգային գիտաժողովների:

Պարզևատրվել է ՀՀ Անանիա Շիրակացու մեդալով (2000), “Հայրենիքին մատուցած ծառայությունների համար” 1-ին աստիճանի (2011) մեդալով, ԼՂՀ “Վաշագան Բարեպաշտ” մեդալով (2013), ՀՀ ԱԺ “Պատվո մեդալով” (2013):

**Պրոֆեսոր Արա Ամիրյան - 1979թթ. ավարտել է Հայկական Գյուղատնտեսական ինստիտուտի (ՀԳԻ) գյուղ. մեքենայացման ֆակուլտետի գյուղ. մեքենայացում բաժինը՝ ստանալով ինժեներ-մեխանիկի որակավորում: 1982-1984թթ. եղել է Հայկական Գյուղատնտեսական ինստիտուտի „Գյուղատնտեսական և մեխորատիկ մեքենաներ, ամբիոնի ասպիրանտ: 1987թ.-ին Դոկտ-Ռուստովի Գյուղատնտեսական Մեքենաշինության ինստիտուտի մասնագիտացված խորհրդում պաշտպանել է իր թեկնածուական աստենախոսությունը՝ ստանալով տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1991թ.-ին ստացել է դոցենտի գիտական կոչում: 1998 թ.-ին Հայկական Գյուղատնտեսական Ակադեմիայի (ՀԳԱ) մասնագիտական խորհրդում պաշտպանել է դոկտորական աստենախոսությունը՝ ստանալով տեխնիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 2000 թ.-ին ստացել է ՀԳԱ պրոֆեսորի գիտական կոչում:**

Գիտական հետազոտությունները վերաբերում են մեխանիկական փոխանցումներին և էներգիայի այլընտրանքային աղբյուրների ուսումնասիրությանը: Ստեղծել է նոր տիպի շղթայալիքային փոխանցում:

Տեղինակ է 1 մոնոգրաֆ աշխատության և 100-ից ավել գիտական և մեթոդական աշխատությունների:

2011 թ.ից համատեղության կարգով աշխատում է նաև որպես ՀՊԱՀ (ներկայում ՀԱԱՀ) կրթական բարեկոխումների, ռազմավարական պլանավորման, որակի վերահսկման և ինքնավերլուծության վարչության պետ: 2006 թ.-ից առ այսօր զբաղեցնում է ՀՊԱՀ “Գրաֆիկայի և ՄՆՀ” ամբիոնի վարիչի պաշտոնը: 2003-2006 թթ. աշխատել է որպես Հայաստանի պետական ազրարային համալսարանի (ՀՊԱՀ) “Գրաֆիկայի և ՄՆՀ” ամբիոնի պրոֆեսոր: 2000 թ.-ից մինչև 2003 թ.-ի

սեպտեմբերի 1-ը աշխատել է որպես է ՀԳԱ “Ավտոտրակտորների և տրանսպորտային փոխադրումների” ամբիոնի պրոֆեսոր: 1994թ. - ից մինչև 1996թ.-ի մարտ ամիսը համատեղության կարգով աշխատել է որպես Հայկական Գյուղատնտեսական Ակադեմիայի Պայմանագրերի և ներդրումների բաժնի վարիչ: 1990-1991թ.թ. - ՀԳԻ գյուղ. մեքենայացման ֆակուլտետի դեկանի տեղակալ: 1986-1990թ.թ. - ՀԳԻ ասպիրանտուրայի բաժնի վարիչ: 1984թ.-ին որպես ասիստենտ անցել է աշխատանքի ՀԳԻ „Ավտոմոբիլներ և տրակտորներ“, ամբիոնում: 1979թ.-ի հոկտեմբերց մինչև 1982թ.-ի նոյեմբեր - ՀԳԻ ՀՀԿԵՄ կոմիտեի քարտուղար: 1979 թ.-ի փետրվար-հոկտեմբեր, Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի (ՀԳԻ) ուսանողական կոնստրուկտորական բյուրոյի լաբորանտ:

Ընտրված է որպես Միջազգային երկու միությունների անդամ՝ Միջազգային Ավտոմոբիլային Ճարտարագետների Ասոցիացիայի (SAE International) անդամ, Համաշխարհային Գիտական և Ճարտարագետական Միության (World Scientific and Engineering Society) անդամ:

Մասնակցել է մի շարք տեղական և միջազգային գիտաժողովների: Գիտական գեկույցներով հանդես է եկել Գերմանիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Դանիայում, Ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում, Հունաստանում, կանադայում, Խուալիայում և այլն:

Ներգրավված է եղել մի շարք միջազգային գրանտային ծրագրերում: 1985թ.-ին ստացել է Լենինի Կոմսոմոլ պատվո մրցանակին գիտական հետազոտություն իրականացնելու համար:

**Զարուիի Սարգսյան - Երևանի «Գլածոր» համալսարանի միջազգային հարաբերություններ ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողությի: Մասնակցել է ուսանողական գիտական ընկերության աշխատանքներին: Երիտասարդական հասարարակական կազմակերպության անդամ է:**

## ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

### ՄԱՍ III - Փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրում ԵՊՀ-ում - Հունիս 2013

- Կիրակի՝ 16 հունիս - Փորձագիտական խմբի փակ հանդիպում
- Երկուշաբթի՝ 17 հունիս - Հանդիպումներ
- Երեքշաբթի՝ 18 հունիս - Հանդիպումներ
- Չորեքշաբթի՝ 19 հունիս - Փորձագիտական խմբի փակ հանդիպում և արդյունքների ներկայացում բուհին

**Խմբի ռեկավար՝ պլոֆեսոր Բեն վան Քամփ (Քրյուսել, Բելգիա)**

Կիրակի՝ 16 հունիս		Փորձագիտական խմբի փակ հանդիպում (09:00-13:15)	Վայր
Մեկնարկ	Ավարտ		
09:15	13:15	Փորձագիտական խմբի փակ հանդիպում՝ փաստաթղթերի ուսումնասիրություն (ծանոթացում, ինքնավերլուծության զեկույցի քննարկում, նախապատրաստում հանդիպումներին, փաստաթղթերի ուսումնասիրություն, ձեռքբերված ուսումնառության արդյունքների գնահատում)	ՈԱՍ Կ
<b>Ճաշ</b>			
<b>Երկուշաբթի՝ 17 հունիս</b>		<b>Հանդիպումներ ( 08:30-18:00)</b>	<b>ԵՊՀ</b>
08:30	09:30	Հանդիպում կառավարման խորհրդի հետ	
09:45	10:45	Հանդիպում ռեկտորի և պրոռեկտորների հետ	
11:00	12.00	Հանդիպում կառավարման միջին օղակի ներկայացուցիչների հետ (դեկաններ, ամբիոնի վարիչներ, ուս. վարչության պետ)	
12:15	13:15	Ուսուրաների դիտարկում (1՝ գրադարան և S2S ուսուրաներ	
13:15	14:15	<b>Ճաշ և փորձագիտական խմբի փակ հանդիպում</b>	
14:15	15:00	Հանդիպում ուսանողական խորհրդի ներկայացուցիչների հետ	
15:15	16:00	Հանդիպում գիտխորհրդի անդամների հետ	
16:00	17.30	Փորձագիտական խմբի փակ հանդիպում՝ փաստաթղթերի ուսումնասիրություն	
17:45	18:00	Հանդիպում ռեկտորի հետ	
<b>Երեքշաբթի՝ 18 հունիս</b>		<b>Հանդիպումներ ( 08:30-19:00)</b>	<b>ԵՊՀ</b>
08:30	09:30	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ	
09:45	10:45	Հանդիպում որակի ապահովման պատասխանատուների հետ	
11:00	12:00	Բաց հանդիպում / խորհրդատվություն	
12:00	13:00	Ուսուրաների դիտարկում (2՝ հիմնական ուսանողական ծառայություններ (Կարիերայի կենտրոն, Միջազգային համագործակցության վարչություն, սպորտահիմք, բուժկետ, Ճաշարան)	
13:00	14:00	<b>Ճաշ և փորձագիտական խմբի փակ հանդիպում</b>	
14:15	15:00	Հանդիպում 1՝ Ա. ուսանողների ներգրավվածություն որակի ապահովման գործընթացներում <sup>8</sup>	

ՈԱ գործընթացներում ներգրավված տարբեր ուսանողական մարմինների, ԵՊՀ խորհուրդների ներկայացուցիչներ և այլ ուսանողներ (6 հոգի, 45 րոպե)

<b>15:15</b>	<b>16:00</b>	Հանդիպում 2` Բ. PDCA-ը ֆակուլտետի մակարդակում (Տնտեսագիտության ֆակուլտետ) <sup>9</sup>	
<b>16:15</b>	<b>17:00</b>	Հանդիպում 3` Ը. Իջևանի մասնաճյուղ՝ ներառյալ կիրառական արվեստների ֆակուլտետ <sup>10</sup>	
<b>17:15</b>	<b>19:00</b>	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	
<b>Չորեքշաբթի՝ 19 հունիս</b>		<b>Փորձագիտական խմբի փակ հանդիպում և արդյունքների ներկայացում բուհին (08:30-12:00)</b>	<b>ԵՊՀ</b>
<b>08:30</b>	<b>10:45</b>	Փորձագիտական խմբի փակ հանդիպում (շարունակական)	
<b>11:00</b>	<b>12:00</b>	Փորձագիտական խմբի կողմից փորձագիտական այցի նախնական արդյունքների ներկայացում բուհի դեկանալարությանը <sup>11</sup>	

<sup>9</sup> Դեկան, ֆակուլտետի խորհրդի 3 ներկայացուցիչ, 2 ուսանող (6 հոգի; 45 րոպե)

<sup>10</sup> Իջևանի մասնաճյուղի ներկայացուցիչներ, ներառյալ՝ կիրառական արվեստների ֆակուլտետի դեկանը և 2 ուսանողներ (6 հոգի; 45 րոպե)

<sup>11</sup> Կարևոր է հանդիպմանը ներկա գտնվեն նաև 3 արտաքին և 3 ներքին շահակիցներ

### ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	ՓԱՍՏԱԹՂԹԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՉԱՓԱՆԻՇ / ՉԱՓՈՐՈՇԻՋ
1	Համալսարանի կանոնադրություն	1.1.
2	ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագիր (2010-2014 թթ.)	1.1.
3	ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլան	1.3.
4	ԵՊՀ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱ8) լրակազմ (համապատասխանաբար՝ 2003-2009 թթ. և 2005-2010 թթ.)	1.3.
5	Երևանի պետական համալսարանի գործունեության առանցքային ցուցանիշներ, Եր., 2009 թ., 2010 թ.	1.3.
6	Շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումներ	1.3
7	Երևանի պետական համալսարանի խորհրդի աշխատակարգ (2006 թ.)	2.1.
8	ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգ (2011 թ.)	2.1.
9	Երևանի պետական համալսարանի ռեկտորի ընտրության ընթացակարգ (2006 թ.)	2.1.
10	ԵՊՀ ռեկտորատի կանոնակարգ (2011 թ.)	2.1.
11	ԵՊՀ ֆակուլտետի օրինակելի կանոնադրություն	2.1.
12	ԵՊՀ ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգ	2.1.
13	ԵՊՀ ամբիոնի վարչի ընտրության ընթացակարգ	2.1.
14	ԵՊՀ-ի հաշվապահական հաշվառման քաղաքականություն	2.1.
15	ԵՊՀ ՊՈԱԿ-ի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվ	2.1.
16	ԵՊՀ ՊՈԱԿ-ի եկամուտների և ծախսերի (բյուջե) տարեկան կատարողական	2.1.
17	Ուսանողական խորհուրդի կանոնադրություն	2.2., 4.7
18	ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգ	2.6.
19	Երևանի պետական համալսարանում կրեդիտային համակարգի ներդրման ժամանակացույց»	3.1.
20	ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման մեթոդական ուղենիշներ	3.1.
21	Կրթական ծրագրերի տեղեկագիրը	3.1.
22	ԵՊՀ-ում ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման գործող կարգ	3.3.
23	Ուսանողի գնահատման ԵՊՀ ուղեցույց	3.3.
24	Ուսանողի միջազգային շարժունության ձևաթերթ	3.4.
25	ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգ	3.5.
26	ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգ	3.5.
27	Կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ ուսումնական գործնթացի կազմակերպման կարգ	4.2.
28	ԵՊՀ ռեկտորի հրաման Ուսումնական խորհրդատունների (կուրատորների) աշխատանքը կազմակերպելու մասին (27.07.2010 թ.)	4.2.
29	ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներքուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի	4.4.
30	Առաջին կուրսեցու ուղեցույց	4.4.


<b>31</b>	ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման կանոնակարգ	4.8.
<b>32</b>	ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման կարգ	5.1
<b>33</b>	ԵՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման նոր կարգ	5
<b>34</b>	ԵՊՀ դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգ( 2010)	5.3
<b>35</b>	Երևանի պետական համալսարանում դասախոսների տարբերակված հավելավճարի կարգ և Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կառուցվածք և բովանդակություն	5.4 6.3.
<b>36</b>	Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման նոր՝ լրամշակված կանոնակարգ (ԵՊՀ ԳԽ որոշում, 17.06.2010 թ.)	5
<b>37</b>	Դասախոսների որակավորման բարձրացման առաջին հնգամյա հեռանկարային պլան (26.12.2002 թ.) Դասախոսական կազմի որակավորման բարձրացման երկրորդ հնգամյա պլան (29.11.2007 թ.)	5.4.
<b>38</b>	Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագիր (18.11.2010 թ.) և Ծրագրի իրականացման կանոնակարգ (07.07. 2011 թ.)	5.4.
<b>39</b>	Երևանի պետական համալսարանի գիտական գործունեության առանց-քային ցուցանիշներ (2000-2010)	6.1.
<b>40</b>	Հանրային նշանակության միջոցառումների կազմակերպման, իրազեկման և հասարակայնության հետ տարվող աշխատանքների ուղեցույց (հաստատվել է ԵՊՀ ուժուորի 29.09.2010 թ. N 176/1 հրամանով)	8.3.
<b>41</b>	Միջազգային համագործակցության վարչության կանոնադրություն	9.2.

#### **ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՂՉԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

1. ԵՊՀ պատմության թանգարան
2. ՏՏ կենտրոն
3. Գրադարան և ընթերցասրահներ
4. Լաբորատորիաներ
5. Լեզվի կենտրոն
6. Միջազգային կապերի բաժին
7. Լսարաններ

Եթուանքսիր Պահաժամանքը Վայսութեան Պահաժամ

#### **ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԵՊՀ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ**



## ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **ՈԱԱԿ-**“Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն” հիմնադրամ
2. **ՈԱՇ** - Որակավորումների ազգային շրջանակ
3. **ARQATA** - Հայաստանում որակի ապահովման տեխնիկական աջակցության ծրագիր
4. **ԵԿԿՓՀ**- Եվրոպական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգ
5. **ՈԱԵՉՈՒ**- Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ
6. **ԿՀՅ**- Կատարողականի առանցքային ցուցիչներ
7. **ՄՎՎ**- Միջազգային կապերի վարչություն
8. **ՆՎԱՕ**- Հոլանդիայի և Ֆլանդրիայի հավատարմագրման գործակալություն
9. **ՊԻՍԲ**- Պլանավորել-իրականացնել-ստուգել-բարելավել
10. **ՈԱ**- Որակի ապահովում
11. **ՈՍԿ** – Որակի ապահովման կենտրոն
12. **ՀՀ**- Հայաստանի հանարապետություն
13. **ՈԹ** - Ռազմավարական պլան
14. **(ՈՒԳԸ)**- Ուսանողական գիտական ընկերություն
15. **ԵՊՀ**- Երևանի պետական համալսարան